Թուրքիայի կառավարությունը, որը հայտարարում է, թե համաշխարհային ֆինանսական ձգնաժամը էականորեն չի ազղի երկրի սնտեսության վրա, անցած տարվա վերջերին դիմեց ԱՄՀ-ին նոր վարկեր ստանալու խնդրանքով: Հիմնադրամը առաջարկում է 19 մլրդ. դոլար, սակայն Թուրքիայի կառավարությունը դա ֆիչ է համարում և ակնկալում է ստանալ 20-ից 40 մլրդ.: Դա վկայում է այն մասին, որ Թուրքիայում հասունանում են լուրջ սնտեսական հիմնախնդիրներ, որոնք անհնար է լուծել առանց արտաքին ֆինանսական աջակցու-

թյան: 2008 թ. նոյեմբերի սկզբին Standard & Poor's միջազգային վարկանիշային կազմակերպությունը իջեցրեց Թուրքիայի վարկային ռեյտինգը «կայունից» մինչև «բացասական»: Շուտ վերլուծաբաններ կառավարության լավատեսական հայտարարությունները կադրում էին 2009 թ. մարտին կայանալիք սեղական ընտրությունների հետ: Նրանց կարծիքով, կառավարող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը ցանկանում է ցույց տալ կուսակցության սնեսական հաջողությունները:

Գործարար քաղաքականները կառավարությանը քննադատում են, որ ժամանակին չի ընդունել հակաճգնաժամային միջոցառումների ծրագիր և դիմել ԱՄՀ: Նրանք մեղադրում են երկրի ղեկավարությանը ֆաղափական դրոշմի մեջ: Նրանց կարծիքով, ֆանի դեռ կառավարությունը հայտարարում էր, որ երկիրը չի սուժելու, այլ կառավարություններ արդեն դիմել են ԱՄՀ-ի օգնությանը: 2008 թ. հոկտեմբերից սկսած ԱՄՀ են դիմել մի քանի երկրներ: Հիմնադրամը որոշել է վարկեր սրամադրել Հունգարիային, Իսլանդիային, Ուկրաինային, Պակիստանին, Սերբիային, Լատվիային և Հայաստանին:

Թուրքիայի գործարար աշխարհի առաջատարները և ներդրողները անհամբեր սպասում են վարկի ստացմանը՝ թուլացող սնեսությունը դադարեցնելու համար: Թուրքիայի վարչապետը հայտարարել էր, որ վարկը կարող են ստանալ մինչև 2008-ի վերջը, եթե բանակցություններն ընթանան նորմալ ճանապարհով: Բայց, ինչպես գիտենք, դա չեղի չունեցավ:

Այո, Թուրքիայի սնեսությունը հնարավոր է կանգուն դադարեցնել միայն արտաքին գործընթացի հաջողությամբ: Առանց դրա Թուրքիան հայտնվում է ֆաղափական ճգնաժամի մեջ, իսկ երկրում սկսվող ֆաղափական անկայունությունը միշտ հանգեցնում է սնեսական ճգնաժամի: Դա այդ երկրի ֆաղափական-սնեսական համակարգի առանձնահատկությունն է, ինչը բազմիցս ադապտացվել է վերջին տասնամյակների ընթացքում: 1970-ական թվականների ֆաղափական անկայունությունը Թուրքիայում հանգեցրեց խրոնիկական ինֆլյացիայի, որը ձգվեց մինչև 2001 թ. (միջին տարեկան ցուցանիշը՝ 38 տոկոս): Միմյանց հաջորդող կառավարությունները դրոշմաբեկական լուրջագրությունով ավելացնում էին բյուջեային ծախսերը և իրականացնում ենթակառուցվածքային հավակնոս նախագծեր: Ինֆլյացիային նդատում էին նավթի բարձր գները, ռազմական մեծ ծախսերը, ինչը դրամավորված էր հարևանների, հատկապես Հունաստանի հետ ունեցած աշխարհաֆաղափական լարվածությամբ: 2001 թ. ֆինանսական ճգնաժամի ժամանակ օտարերկրյա ներդրողները սկսեցին իրենց փողերը երկրից հանել, ինչը հնարավոր եղավ կանխել միայն ԱՄՀ-ի կողմից փոխառու միջոցների սրամադրումից հետո:

Ամենամեծ հիմնախնդիրը ճիշտ ֆաղափականությունն զսնելն է, բայց սրտիված ֆաղափական դաշտում համաձայնության հասնելը գործնականում անհնար է:

Թուրքիայի ներկայիս ղեկավարությունը փորձում է վիճակը փրկել ԵՄ-ին երկրի անդամակցության գործընթացի արագացման ճանապարհով: Եվ չնայած Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ալի Բաբաջանը

հրադարակել է Թուրքիայի եվրոանդամակցության հավակնոս ազգային դրան, բանակցությունները աննշան առաջադիմություն են արձանագրել: Եվրոդաշինները հավանաբար հերթական անգամ կֆինանսատեն թուրքական բարեփոխումները: Մյուս կողմից՝ Թուրքիայի ղեկավարող քաղաքականներում կան լուրջ մտադրություններ, որ գլոբալ ֆինանսական ճգնաժամը կարող է դանդաղեցնել և երկրորդ դրամ մղել ԵՄ ընդլայնման գործընթացը: Ըստ Բաբաջանի, եթե այդ գործընթացը չարունակվի, ադա Եվրամիությունը անվստահության հիմնախնդիր կունենա, իսկ դրա արունակումը, ընդհակառակը, կնդատի անվստահությանը և բարիդրացիությանը:

Երբեմն-երբեմն թուրքական հասարակության որոշակի քաղաքականներ երկրի զարգացման համար առանձին ռազմավարություն են առաջարկում: Նրանք զսնում են, որ անհրաժեշտ է ներքին արունակյին կողմնորոշված նոր սնեսական ռազմավարություն մշակել: Թուրքիան մտադիր է իջեցնել ճգնաժամի ազդեցությունը սարածաքաղաքի, Կենտրոնական և Հարավ-արևելյան Ասիայի երկրներ արտահանման աճի հաճախ: Ճգնաժամից դուրս գալու համար Թուրքիան փորձում է ակտիվացնել իր կադրերը Ադրբեյջանի, Սաուդյան Արաբիայի, Ռուսաստանի, Թաթարստանի, Միքիայի, Եգիպտոսի և Իրանի հետ: Թուրքերը մտադիր են ակտիվացնել նոր արունակների որոնումները այն երկրներում, որոնք ունեն փակ սնեսություն և որոնց վրա համաշխարհային ճգնաժամը ֆիչ է ազդել:

Ներկայումս կառավարությունը



նը լուսավորում է կրճատել բյուջե-  
սային ծախսերը, ինչը կանդա-  
դառնա նաև Թուրքիայի ռազմա-  
կան հավակնությունների վրա: Ո-  
րոշ արևմտյան և թուրք վերլուծա-  
բանների կարծիքով՝ Թուրքիայի  
դաշնակցության նախարարու-  
թյան կողմից լուսավորված մի  
շարք նախագծեր, ինչպես սղաս-  
վում է, կկրճատվեն կամ կսեղա-  
փոխվեն ավելի հեռու ժամանա-  
կաշրջան:

Տղավորություն է ստեղծվում,  
որ կառավարող կուսակցությունը  
թերագնահատել է ճգնաժամի  
հետևանքները: Իսկ երկրում օրեօր  
ուժգնանում է նրա հասցեին հնչող  
քննադատությունը: Մյուս կողմից,  
հաշվի առնելով, որ իրական ճնշե-  
սության հարվածները դեռևս  
առջևում են, ճգնաժամը կարող է  
հանգեցնել սոցիալական անկար-  
գությունների, ինչը իր հերթին կարող  
է հնարավորություն սալ զինվորա-  
կաններին նորից հայտնվելու երկրի  
ֆաղափական բեմահարթակում:

**Հարց** – Խոսելով Թուրքիայում  
գործող մաֆային օրենքների մա-  
սին, մենք, կարծես, Թուրքիան դի-  
սարկեցինք միայն որդես հայկա-  
կան ամրանների իրացման շու-  
կա: Իմ կարծիքով անհրաժեշտ է  
այն դիսարկել նաև որդես մեր ամ-  
րանների սարանցիկ ճանադարի:  
Դուր ուսումնասիրել եմ, արդյոք, թե  
սարանցիկ ինչպիսի տայմաններ է  
այսօր առաջարկում այդ երկիրը, և  
երկրորդ հարցը՝ ես կարևոր եմ հա-  
մարում նաև աշխատանքի արտա-  
նումը: Իմ կարծիքով սահմանը բա-  
ցելու դարազայում կարող է սեղի  
ունենալ աշխատանքի մեծ չափերի  
հասնող արտադրող Հայաստանից:

Դա մեզ համար դրակա՞ն, թե՞ բացա-  
սական հետևանքներ կարող է ունենալ:

**Դավիթ Լոֆյան** – Ինչ վերաբերում  
է այս հարցի առաջին մասին, ասեմ,  
որ վերլուծությունը կատարվել է Հա-  
մաշխարհային բանկի հասույ դա-  
վերով, և բոլոր ուսումնասիրություննե-  
րը ցույց են տալիս, որ սահմանը բացե-  
լու դեղմում Թուրքիայի համար ամ-  
րանաբաշխանությունը կավելանա  
մոտ 12-15 տոկոսով, իսկ Հայաստանի  
համար, արտադրանքների արտադրից,  
4 տոկոսի չափով: Խոսեմ չափերի բեռ-  
նափոխադրումների առումով Հայաս-  
տանը կհայտնվի ցածրակարգ վիճակում,  
եթե այդ փոխադրումները կատարվեն  
օվկիանոսային նավերով, բայց նման  
խոսեմ չափերի բեռնափոխադրումներ,  
ինչպես զիստեմ, Հայաստանը չի իրակա-  
նացնում և թուրքական նավահան-  
գիստներն օգտագործելու դեղմում ցա-  
հույթներն այնքան էլ մեծ չեն:

Աշխատանքի արտադրողի հետ  
կապված՝ կարող ենք ասել, որ դա  
նույնպես ուսումնասիրված է: Աղա-  
ցուցված է, որ սահմանի բացման դա-  
րազայում աշխատանքի միգրացիան  
մեկ ուղղությամբ կավելանա մոտավո-  
րապես 25 անգամ: Դա այն դեղմում,  
երբ առկա լինեն մի շարք տայմաններ:  
Օրինակ՝ հայերը կնախընտրեն արտա-  
գնա աշխատանքի մեկնել ոչ թե Ռու-  
սաստան, որի հիմնական բնակչությու-  
նից արբերվում են մազերի ու աչքերի  
գույնով, այլ Թուրքիա, որտեղ այդ ար-  
բերությունները գրեթե նկատելի չեն,  
կմեկնեն Թուրքիա, որովհետև ճանա-  
դարհաժախարհ մոտ մեկ-երրորդով ավե-  
լի դակաս է, որովհետև այնտեղ ամեն  
ֆայլափոխի ոսկիանները փաստա-  
թղթեր չեն դառնալու: Դա վառ ա-  
ղացույցն է նաև Վրաստանի օրինակը,  
որտեղից աշխատանքի միգրացիան դե-

ղի Թուրքիա կտրուկ գերազանցեց  
դեղի Ռուսաստանի սեղաբաշխի,  
երբ թափանցիկ դարձավ թուրք-  
վրացական սահմանը: Դեռ ավե-  
լին՝ հենց այդ սահմանի հաշվին  
նույնիսկ Հայաստանից դեղի  
Թուրքիա արտադրող աշխատանքի  
մեկնողների թիվը մոտ 12 անգամ  
մեծացավ:

Եթե այս խնդիրը դիսարկենք  
միայն այն արտադրողներից, որ դա  
հաշվին կրկին արտադրողներ կզան  
Հայաստան, և ցածր խնդիրներ կլուծ-  
վեն, իհարկե դա դրական երևույթ  
է: Բայց չղեկ է անստեղծ նաև հար-  
ցի մյուս կողմը: Թե այդ զանգվա-  
ծային միգրացիայի հետևանքով  
ինչ տայմաններում կհայտնվեն մեր  
հայրենակիցները Թուրքիայում,  
ինչպիսի սերունդ կունենանք հե-  
տագայում: Մասնավորապես են, որոնք  
մտադրվելու սեղիք են տալիս:  
Բանն այն է, որ ժամանակին միգ-  
րացիան դեղի եվրոպական երկր-  
ներ և հասկաղես Գերմանիա մեծ  
չափերի է հասել նաև Թուրքիա-  
յում, բայց ասիմիլացվելու, ձուլվե-  
լու վստահ նրանք չեն ունեցել: Մեր  
դարազայում, սակայն, դժվար է  
դնդել, թե նույնն է սղասում նաև  
հայերին:

Ես առանձնապես կողմ չեմ  
դեղի Թուրքիա աշխատանքի արտա-  
դրողին, բայց միևնույն է, եթե մենք  
չկարողանանք այստեղ գոնե մեկ  
միլիոն աշխատանքի հարց լուծել,  
այդ երևույթն անխուսափելի կլի-  
նի: Եթե նույնիսկ Թուրքիա էլ  
չգնան, կարունակեն գնալ այլ  
երկրներ՝ Ռուսաստան, Սիրիա, Ի-  
րաք և այլն: Հետևաբար ո՞րն է ար-  
բերությունը, թե ինչ ուղղությամբ  
սեղի կունենա արտադրողը:

# **ՀՀ-ՈՒՄ 1920 Թ. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՇՈՒՐՁ**

Արման Եղիազարյան  
*Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ*

Հայասանի Առաջին Հանրապետության դատության մեջ ամենահակասական խնդիրներից մեկը 1920 թ. մայիսին սեղի ունեցած բուլժևիկյան ելույթներն էին: Տասնամյակների ընթացքում իրողությունը ցուցադրվել է ամենահակադիր բևեռներից՝ ներկայացվելով կամ աղոթատեսության և կամ խռովության ձևով: Երբեմն դրա հաղթանակը ներկայացվել է որդես ՀՀ և հայ ժողովրդի փրկության երաժիշիք թուրքական նոր հարձակումից, որով հնարավոր կլինեք դահլիճները հեռազայում քննադատողների կողմից զավթված ՀՀ տարածքները: Այս դատաբանությանը էլ ՀՀ կառավարությունը ներկայացվել է որդես անհեռաժես ու կարճամիտ իշխանություն, մի իշխանություն, որ սեփական ցահը վեր է դասել համաժողովրդական ցահից:

Սոսրև դատական փաստերի անաչառ վերլուծությամբ փորձենք դատասխան սալ վերոհիշյալ և մի ցարփայլ կարևոր հարցերի: Ըստ որում, մենք կֆննարկենք հիմ-

նահարցը հայ և օսարագի բուլժևիկների ճամբարների անցուդարձի ուսումնասիրությամբ և մեծամասամբ նրանց ներկայացրած փաստերի լույսի ներքո: Հենց հիմնականում այդ փաստերն են, որ հնարավորություն են սալիս գնահատելու բուլժևիկների մայիսյան ելույթների հաղթանակի հնարավորությունները:

1920 թ. ադրիլի 28-ին Կարմիր բանակը գրավեց Բաբուն և խորհրդայնացրեց Ադրբեջանը: Կարմիր բանակի այդ արագ հաջողությունը Հայասանի Առաջին Հանրապետության ղեկավարները վերագրում են Ադրբեջանի ղեկավարության ձգտմանը՝ Արցախի, Չանգեզուրի և Նախիջևանի խնդիրների լուծումը Կարմիր բանակի միջոցով իրականացնելու, քանի որ մուսավաթական կուսակցությունը, որ իշխում էր Ադրբեջանում մինչ այդ, ի գորու չեղավ հոգուս Ադրբեջանի այդ խնդիրների կարգավորմանը<sup>1</sup>: Բաբուն գրավելը որդես առաջնային անհրաժեսություն և նդատակ Վ. Լենինը առաջ էր քաշել դեռևս

1920 թ. մարտի 17-ին՝ Ս. Օրջոնիկիձեին ուղղված մի հեռագրում, որտեղ նշված էր, որ բուլեիկներն իրենց բոլոր ուժերը ղեկավարում էր ուղղելով Բաբուն գրավելուն՝ նկատի ունենալով այնտեղի նավթի անհրաժեշտությունը Կարմիր բանակի համար<sup>2</sup>: Խորհրդայնացնելով Ադրբեջանը՝ Կարմիր բանակը հասավ ՀՀ սահմաններին, և վերջինս անմիջապես հայտնվեց ծանր իրադրության մեջ, քանի որ 2 օր անց՝ ապրիլի 30-ին, տեղ հասավ Ադրբեջանի նորահաստատ հեղկոմի վերջնագիրը ՀՀ կառավարությանը՝ դուրս բերել հայկական զորքերը Ղարաբաղից և Չանգեզուրից՝ հակառակ դեղմում ստանալով դաժնորեն: Պասսախանի համար սրվում էր 3 օր ժամանակ<sup>3</sup>: Մայիսի 1-ին ՀՀ կառավարությանը նույնատիպ դաժնորեն դաժնունակող վերջնագրով դիմեց նաև Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի խորհուրդը, ըստ որում, սալով 24 ժամ ժամանակ: ՀՀ կողմից վերջնագրի դաժնորեն չկատարման դեղմում Կարմիր բանակի ղեկավարությունը ստանում էր սեփական դաժնորեն իրագործել զենքի ուժով<sup>4</sup>: Այս երկու վերջնագրերը ցույց տվեցին, որ ադրբեջանական բուլեիկները և Կարմիր բանակի ղեկավարությունը գործում էին համաձայնեցված: Իզուր չէ, որ երկու վերջնագրերի ժամկետներն էլ ավարտվում էին միաժամանակ: Չնայած ՀՀ կառավարությանը հաջողվեց, ստացված վերջնագրերի մասին Մոսկվա հաղորդելով, կանխել վերոհիշյալ ստանալիքների գործադրումը<sup>5</sup>, դարձ դարձավ, որ այլևս բուլեիկյան կառավարությունն ու Ադրբեջանի հեղկոմը համատեղ ձգտելու են լուծել հայ-ադրբեջանական վեճի առարկա սարածքների հարցը հոգուս Ադրբեջանի:

Այս ամենը ոգևորեց հայ բուլեիկներին: Նրանց թվաց, թե եկել է նաև իրենց աստեղային ժամը, հասել է ճիշտ դեղմում ՀՀ-ում իշխանությանը սիրելու: Մանավանդ, մոտենում էին մայիսյան տոնակատարությունները, որ հնարավոր էր օգտագործել բանվորների անունից հանդես եկող բուլեիկների օգտին: Մայիսի 1-ի միջոցառումների ժամանակ ՀՀ սարբեր ֆաղաֆներում բուլեիկները փորձեցին կատարեցին էլույթներ կազմակերպելու, սակայն, ընդհանուր առմամբ, անհաջողության մասնվեցին: Մակայն ՀՀ-ում ադրբեջանական բարձրագույն և իշխանության գրավումը դրվել էր օրակարգում:

Սկզբում ֆնդության առնենք ռազմավարական մի քանի խնդիրներ, որոնց անխուսափելիորեն բախվելու

էին հայ բուլեիկները՝ ցույց տալու «ադրբեջանական» ճիշտ կազմակերպման և իրականացման տեսական հիմքերը և դրանք համեմատելու իրականում տեղի ունեցածի հետ: Այդ համեմատությունը մեզ հնարավորություն է տալիս հասկանալու հայ և օսար բուլեիկների գործողությունները, վեր հանելու դրանց բարձրագույնը և ընթացելու «ադրբեջանական» հաղթանակի հնարավորությունները: Տրամաբանությունը թելադրում է, որ հայ բուլեիկները ղեկավարում էին «ադրբեջանական» սկսել երկու հնարավոր սարբերակներով կամ էլ դրանց խելամուհի համակցումով: Քանի որ Ադրբեջանը խորհրդայնացվել էր ու Կարմիր բանակը զսնվում էր ՀՀ սահմանին (32-րդ դիվիզիա), ադրբեջանական սահմանի հարևանությամբ զսնվող հայ բուլեիկները ղեկավարում էին «ադրբեջանական» հայ-ադրբեջանական սահմանի հարևանությամբ զսնվող օրջաններում: Ստանալով Կարմիր բանակի օգնությունը, նրանք կարող էին ՀՀ խորքերը: Մյուս կողմից՝ Ալեքսանդրապոլը (Գյումրի) և որոշ չափով նաև Կարսն ու Ղարաբաղիսան (Վանաձոր) բանվորական ֆաղաֆներ էին, առաջինը նաև ՀՀ մեծագույն ֆաղաֆն էր, ուստի այնտեղ «ադրբեջանական» սկսելը բուլեիկներին որոշակի առավելություններ էր խոստանում: Իսկ ինչ վերաբերում է այս երկու հնարավորությունների համակցմանը, ադրբեջանական կարող էր ՀՀ կառավարությանը դժվարին դրության մեջ դնել, քանի որ մի կողմից ադրբեջանական էր հանրապետության թիվ առաջին ֆաղաֆը, մյուս կողմից՝ ճանապարհ էր բացվում Կարմիր բանակի՝ ՀՀ ներխուժելու համար: Եթե դրան ավելացնենք Կարմիր բանակի վերոհիշյալ վերջնագիրը, ադրբեջանական կատարողություն կստեղծվի, որ Կարմիր բանակը լիակատար հավանականությամբ դիմելու էր այդ ֆայլին, չնայած վերջնագիրը վերաբերում էր հայ-ադրբեջանական վեճի սարածքներին: Այնուհաս է, որ ՀՀ խորհրդայնացումը այդ վեճի լուծման համար

<sup>1</sup> Խաչատրյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 252-253:

<sup>2</sup> Кадишев А., Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960, с. 230.

<sup>3</sup> Չորհրդայն Է., 1920 թ.: Թուրք-հայկական դաժնորեն և տեղությունները, Ե., 1997, էջ 14:

<sup>4</sup> Անդ, էջ 15:

<sup>5</sup> Անդ, էջ 16:



Ն. Նարիմանով

լավագույն հնարավորություններ էր ստեղծելու, իսկ ՀՀ բուլժակների «աղսամբությունը»՝ լավագույն հնարավորությունն էր ՀՀ-ն խորհրդայնացնելու: Հարկ է անդրադառնալ մեկ այլ շահ կարևոր հարցի, որին, որքան մեզ է հայտնի, դեռևս որևէ անդրադարձ չի եղել: Մյուս էին դիմելու հայ բուլժակները օգնության համար՝ Ադրբեջանի հեղկոմի՞ն, թե՞ Ադրբեջանում սեղակայված Կարմիր բանակի հրամանատարությանը: Հարցի կարևորությունը շահ մեծ է, քանի որ, ինչպես կեսանենք, սկզբում նրանք դիմեցին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին: Ի՞նչ էր դա նշանակում՝ Ն. Նարիմանովի գլխավորած Ադրբեջանի հեղկոմի և Կարմիր բանակի հրամանատարության փոխկառավարչության սխալ սեռակե՞ս, թե՞ իրոք նման տղավորություն էին ստանում Ադրբեջանին կողմից նայողները: Մակայն այդ առաջին տղավորությունը սոսկ խաբկանք էր, որ հայ բուլժակները, ինչպես ցույց կտանք, դարձեցին բավական ուժ, երբ դրությունն անելանելի էր նրանց համար:

Բոլորովին չկասկածելով, որ հայ բուլժակները հասկանալի էին առել մեր բերած սրամաքանական բոլոր զարգացումները, անդրադառնանք նրանց գործողությունների փաստական կողմին, որը ցույց կտա իրերի իրական դասերը:

Սկզբնապես հայ բուլժակները որոշում էին կայացրել «աղսամբությունը» սկսել խորհրդայնացված Ադրբեջանի սահմանից ոչ հեռու գտնվող Դիլիջանում, որտեղ Կարմիր բանակից օգնություն ստանալը շահ իրական էր<sup>6</sup>: Մայիսի 3-ին Ա. Նուրիջանյանը և Ս. Մուսայելյանը հեռագրեցին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին՝ խնդրելով օգնություն<sup>7</sup>: Տրամաբանությանը համադասասխան ֆայլեր են, որ կատարեցին հայ բուլժակները: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Բայց իրադարձություններն այլ կերպ զարգացան: Արդեն մայիսի 5-ին, այսինքն՝ Ն. Նարիմանովին ուղղված հեռագրից 2 օր անց, Ալեքսանդրապոլի փակ նիստում Ա. Նուրիջանյանը հարց դրեց՝ ղախանջելով «աղսամբությունը» սկսել Ալեքսանդրապոլում և ոչ թե Դիլիջանում: Դիլիջանի ներկայացուցիչները ղնդում էին նախնական արքերակի, այսինքն՝ Դիլիջանից «աղսամբությունը» սկսելու վրա, բայց հաղթեց Ա. Նուրիջանյանի սեռակեցը, և «աղսամբությունն» սկսվեց Ալեքսանդրապոլում մայիսի 10-ին<sup>8</sup>: Ի՞նչ կարող էր սեղի ունեցած լինել, որ ստիպեր Ա. Նուրիջանյանին կտրուկ փոփոխություն կատարել «աղսամբության» արդեն ծրագրված ռազմավարության մեջ: Միայն մեկ դասձառ կարող էր լինել՝ Ն. Նարիմանովը մերժել էր հայ բուլժակների խնդրանքը կամ էլ՝ թողել անդասասխան: Նրա մերժման դասձառությունների դարգաբանմանը կանդրադառնանք սուրև, սակայն ստեղծված իրավիճակում հայ բուլժակների համար դա այնքան էլ կարևոր չէր, կարևորը մերժումն էր, որ ի սկզբանե կանխագուշակում էր հայ բուլժակների դարձությունը: Եթե Ն. Նարիմանովը մերժում է օգնություն ցույց տալու խնդրանքը, ապա Դիլիջանում «աղսամբություն» սկսելը ոչ մի կարևորություն չունի: Միակ հնարավորությունը Ալեքսանդրապոլում «աղսամբելն» էր: Խնդիրն այն է, որ մայիսմեկյան տղակատարությունների ժամանակ բուլժակներն անցել

<sup>6</sup> «Մայիսյան աղսամբությունը Հայաստանում (փաստաթղթերի և դրույմենների ժողովածու)», Ե., 1930, էջ 104-105:

<sup>7</sup> Кадышев А., с. 287.

<sup>8</sup> «ՄԱՀ», էջ 105:

էին ամեն չափ ու սահման, և նրանց մնում էր միայն «ամուսանալ», այլապես բոլոր նրանք կհայտնվեին բանտում:

Ալեքսանդրապոլում բոլշևիկյան ելույթն սկսվեց մայիսի 10-ին: Առանց դրսի օժանդակության այդ ելույթը շուտով հայ բոլշևիկներին կանգնեցրեց համարյա անլուծելի խնդիրների առջև: Բանվորական ամուսանությունը ՀՀ-ում կարող էր ունենալ զուտ սեղային բնույթ՝ սահմանափակվելով արդյունաբերական ֆիշթով ֆադաֆներում: Այսինքն՝ հաղթանակի ոչ մի հնարավորություն չկար: Ելույթի ղեկավար Ա. Նուրիջանյանն ուժացումով հասկացավ դա: Պետք էր դրսից օգնություն ստանալ, այլապես ջախջախումն անխուսափելի էր: Իսկ ո՞ւմ դիմել: Ն. Նարինանովից այլևս հույս չկար: ՀՀ սահմանին՝ Աղսաֆայում, կանգնած էր Կարմիր բանակի 32-րդ դիվիզիան: Ա. Նուրիջանյանը որոշեց դիմել նրանց օգնությանը: Մայիսի 13-ին հայ բոլշևիկներից Այվազյան ազգանունով մեկն անցավ ՀՀ սահմանն ու գնաց Աղսաֆա՝ վերոհիշյալ դիվիզիայի հրամանատարության մոտ: Այդ դիվիզիայի որոշումներ մասն Բարվանսարա մայիսի 20-ին<sup>9</sup>: Հետաքրքիր փաստ է, եթե հաշվի առնենք, որ այն ժամ էր ունեցել մեծ ուժացում՝ սեփական մուսքը ՀՀ դարձնելով անօգուտ, եթե, իհարկե, այդ մուսքը կասարվել էր հայ բոլշևիկներին օգնելու նպատակով: Նախ սեսնենք, թե ինչպիսի՞ն էր այդ «գործառնալի» ուժը: Կ. Սասունին վկայում է, որ դրա թվաքանակը 30 ձիավոր է եղել՝ թուրք և ռուս<sup>10</sup>: Սովետական ժամանակները նշում են, որ ՀՀ են մտել Կարմիր բանակի մի քանի գործառնալի<sup>11</sup>: Որևէ կարծիք հայտնելուց առաջ նախ անհրաժեշտ է այդ գործառնալի գործողություններին, որոնք դարձրեց ցույց կրակի իրական դասերը: Մտնելով Բարվանսարա, գործառնալի առաջ ցարժվեց մինչև Դիլիջան, որտեղ ստեղծվեց հեղկոմ, և կանգ առավ: Երբ խոսք եղավ նրա առաջխաղացման մասին, այդ գործառնալի հրամանատարներն առաջարկեցին, որ ժամանակը բոլշևիկյան գործառնալի անցնի հարձակման, իսկ իրենք գնան նրա ետևից: Միևնույն ժամանակ վերոհիշյալ բոլշևիկ Այվազյանն Աղսաֆայից ցարժվեց Բաֆու՝ օգնություն խնդրելու<sup>12</sup>:

Ի՞նչն էր դասձառը, որ այդ «գործառնալի» այդքան զգուշանում էին բացահայտ գործողությունների դիմելուց: Կարող են լինել մի քանի դասձառներ, սակայն մեզ թվում է, թե հիմնական դասձառները երկուսն էին, ըստ որում՝ այդ երկու դասձառները լրացնում էին մեկը մյուսին. ա-



Ալեքսանդր Եղիազարյան (Գր)

ռաջին՝ ճիշտ է Կ. Սասունու բերած թիվը, ուսի՝ 30 հոգով այդ «գործառնալի» ոչինչ անել չէր կարող, և երկրորդ՝ իրականում Կարմիր բանակի այդ գործառնալի մուսքը ՀՀ հետադարձում էր բոլորովին այլ նպատակ, որին կանոնադրական ֆիշթ անց: Դա էր ամուսնացում այն, որ բոլշևիկ Այվազյանը ցարունակեց ճանապարհը Բաֆու՝ այնտեղից օգնություն ստանալու հույսով: Պարզ է, որ մայիսի 13-ին Աղսաֆա հասած Այվազյանը չէր կարող ստասել, մինչև որ մայիսի 20-ին Կարմիր բանակի 32-րդ դիվիզիան «գործառնալի» մտնեց Բարվանսարա, բացի այդ, մեզ թվում է, որ մայիսի 13-ի դրությամբ նա մեծում էր ստացել 32-րդ դիվիզիայի հրամանատարությունից: Կարմիր բանակի որոշումը՝ «գործառնալի» մտնել Բարվանսարա, անկասկած ընդունվել էր ավելի ուշ՝ մեկ այլ որոշման իրականացմանը նպաստելու վճռականությամբ: Եթե «ամուսնալի» հայ բոլշևիկները իմանային այն մասին, որ Կարմիր բանակը

<sup>9</sup> Անդ, էջ 108:

<sup>10</sup> Սասունի Կ., Մայիսյան խռովությունները և թաթարական ամուսնալի ցեղանները (Հայաստանը 1920 թվականին), Բեյրութ, 1968, էջ 122:

<sup>11</sup> «ՄԱՀ», էջ 108:

<sup>12</sup> Անդ:



Կարմիր բանակը Երևանում, 1920 թ.

ուժեր է մտցնելու ՀՀ, դժվար թե զենքերը վայր դնեին, նրանք կադասեին ու կդայաբեին: Դա կարող էր փոխել «ադասամբության» ընթացքը, քանի որ Ալեքսանդրապոլի ելույթի ճնշմանը նդասեց այն, որ արսափին օգնությունից հույսները կսրած հայ բոլեհիկները, որոնք հասկացել էին ՀՀ-ում բոլեհիկյան հեղաերջում իրականացնելու սեփական հնարավորությունների անբավարարությունը, որոեցին հանձնվելու վերաբերյալ բանակցություններ սկսել քաղափին մոեեցող ՀՀ բանակի ներկայացուցիչների հե<sup>13</sup>: Իսկ ո՞րն էր Կարմիր բանակի ուժերը մայիսի 20-ին Քարվանսարա մտցնելու իրական նդասակը: Փասերը մեզ այն համոզմանն են բերում, որ դրա նդասակն էր եղել ՀՀ կառավարության ուեադությունը Ղարաբաղում նախադասրասվող դեղերից: Նախասեավում էր հարձակում Ղարաբաղի վրա, որեղ գեմվում էր Դրասամաս Կանայանը (Դր): Կարմիր բանակի գորախմբի մոեքը Քարվանսարա ոգևորելու էր հայ բոլեհիկներին, որոնք խռովություն էին բարձրացնելու Քարվանսարա-Դիլիջան սարածփներում: Նոր-նոր ՀՀ մեծ քաղափներում բոլեհիկյան ելույթները ճնեած կառավարությունն իր բոլոր ուժերը նեեելու էր

այդ ուղղությամբ, ինչի հեեևանփով Դրոն գրկվելու էր օգնություն սանալու հնարավորությունից: Նա օգնություն չէր կարող սանալ նաև Չանգեգուրից, որեղ սկսվել էին բոլեհիկների խռովությունները, և եեղի դեկավարությունը լարում էր ուժերը՝ դրանք ճնեելու համար<sup>14</sup>:

Մայիսի 21-ին ՀՀ կառավարությունը բողոփ նոսա ուղարկեց Ադրբեջանի բոլեհիկյան դեկավարությանը՝ նեելով, որ երկու երկրների միջև դասերազմական գործողություններ չեն սկսվել և Քարվանսարայի դեղքը եեղիփ կսա ցավալի թյուրիմացությունների<sup>15</sup>: Դրանից հեեո Կարմիր բանակի հիեյալ «գորամասերը» մեան Դիլիջան ու այնեեղ մայիսի 21-ին հեղկոմ հասսասեցին<sup>16</sup>: ՀՀ կառավարությունը Դիլիջան ուղարկեց կառավարական գորեր և կամավորական գորամասեր, որոնք եուեով ազասագրեցին Դիլիջանը<sup>17</sup>:

<sup>13</sup> Վրացյան Ս., Հայասանի Հանրադեություն, Ե., 1998, էջ 438:

<sup>14</sup> «ԲեՀ», 1998, թիվ 1, էջ 22-23:

<sup>15</sup> Մասունի Կ., էջ 122:

<sup>16</sup> Վրացյան Ս., էջ 424:

<sup>17</sup> Մասունի Կ., էջ 129:

Գալիս էր 1920 թ. մայիսի 28-ը՝ ՀՀ անկախության հռչակման երկրորդ տարեվեճի օրը, որի նախօրյակին բոլշևիկների ելույթները ձևավորված էին ամենուր: Արդեն հայտնի էր դարձել Քարվանսարա և Դիլիջան մտած Կարմիր բանակի զորախմբի բուն նպատակը: Մայիսի 23-ին Շուշի էին հասել Կարմիր բանակի զորամասերը, մայիսի 25-ին Դրոն իր ջոկատով ստիպված հեռացել էր այնտեղից, և Ղարաբաղը հայտարարվել էր խորհրդային<sup>18</sup>: ՀՀ կառավարությունը՝ զբաղված Դիլիջանի ելույթի ձևումով, ուշացել էր ու կանգնել փաստի առաջ: Իսկ թե Կարմիր բանակի ի՞նչ ուժեր էին խորհրդայնացրել Ղարաբաղը, մեր տեսակետի հիմնական հաստատող փաստն է: Ղարաբաղը խորհրդայնացրել էր Աղսաֆայում տեղակայված Կարմիր բանակի 32-րդ դիվիզիան, որն իր զորաջոկատը Քարվանսարա մտցնելու հաջորդ օրը հրաման էր ստացել Երեվանի դեղի Ղարաբաղի սահմանը՝ Թարթառի Երջանում կենտրոնանալու համար<sup>19</sup>:

Հայ բոլշևիկների մայիսյան ելույթներին վերաբերող մյուս կարևոր խնդիրը դրսից սղասվող օգնության և դրա չգալու խնդրի տարզաբանումն է: Ուրբան էլ որ զարմանալի կթվա, բայց ժամանակաբաժանի սրամաքանությունից բխում էր, որ խորհրդայնացված Ադրբեջանին բոլորովին ձեռնառն չէր ՀՀ խորհրդայնացումը մայիսին: Այդ են աղագուցում փաստերը: 1920 թ. ապրիլի 29-ին ՀՀ կառավարությունը վերջնազոր ուղարկեց Ադրբեջանի հեղկոմի նախագահին, որտեղ սավում էր, որ մարտի 22-ից մուսավաթականների բանակը հրի ու սրի է մասնել Ղարաբաղը, որ այդ բանակը այսօր էլ այնտեղ է և անում է նույն բանը: ՀՀ կառավարությանն են հասել լուրեր, որ դրանց օգնության են հասնում նոր ուժեր, այս անգամ արդեն խորհրդային զորքերի տեսքով: Հույս էր հայտնվում, որ Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությունը հավասարիմ կմնա ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին<sup>20</sup>: Մեկ այլ փաստաթղթի համաձայն, որ թվագրվում է նույն ապրիլի 29-ով, Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը հայտնում էր, որ իրեն ստուգադեպ հայտնի է դարձել, որ Եվլախը գրաված Կարմիր բանակն առաջ է Երեվանում Շուշի ճանապարհով՝ նպատակ ունենալով միանալու Բաքուի կողմից անասողիական բանակի հետ: Ադրբեջանի ժամանակավոր ժողկոմի նախագահ Սուլթանովը Թիֆլիսի ներկայացուցիչ Բամմասովին հաղորդել է, որ Վրաստանը իրենց համար վստահավոր չէ, իսկ եթե ՀՀ ղեկավարությունը



Ալ. Խաչիսյան

փորձի խանգարել Կարմիր բանակի Երեվանը, իրենք կդառնան ՀՀ-ի դեմ: Իսկ անասողիական զորքի հետ միանալը տեղի էր ունենալու ոչ թե Վրաստանի, այլ Հայաստանի և, մասնավորապես, Ղարաբաղի, Չանգեզուրի և Նախիջևանի վրայով<sup>21</sup>: Ադրբեջանն այստեղ հետադարձում է սեփական Երեվանը: Եթե Կարմիր բանակն անցնում է երեք վիճելի տարածքների վրայով, ապա դրանց «խորհրդայնացումը», այսինքն՝ կցումը Ադրբեջանին, իրական կերպարան է ստանում: Այն, ինչ չէր կարողացել անել մուսավաթական Ադրբեջանը, անելու էր խորհրդային Ադրբեջանը՝ Կարմիր բանակի ուժերով: Փաստորեն, տարածաբանի միակ խորհրդայնացված երկիր լինելը մեծ հնարավորություններ ու հեռանկարներ էր բացում Ադրբեջանի համար:

<sup>18</sup> «ԲԵՀ», 1998, թիվ 1, էջ 22:

<sup>19</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг.", сборник документов, с. 471-472, §ԵԲ., 1998, ԳՅՆ 1, իջ 26:

<sup>20</sup> ԱճՊ, էջ 441:

<sup>21</sup> ԱճՊ, էջ 442:



Ս. Օրջոնիկիձե

Այս տղայմաններում Ադրբեջանի բոլշևիկ ղեկավարները ստանում են ՀՀ ամսամբել ցանկացող բոլշևիկների դիմում-խնդրանք՝ նույնպես ՀՀ խորհրդայնացմանը: Ինչ-ինչ, բայց այդ օրերին Ադրբեջանին խորհրդայնացված Հայաստանի տեսք չէր, դեռ ավելին, նրանք դառնում էին այդ օրերին ՀՀ-ն խորհրդայնացնել ցանկացողների կասաղի հակառակորդները: Անկախ ՀՀ-ի տարագայում Կարմիր բանակի անցումը հայ-ադրբեջանական վիճելի սարածքներով սոսկ անցում չէր, այլ նաև դրանց նվաճում ու հանձնում Ադրբեջանին, ինչի հույսն ունեին ադրբեջանցի բոլշևիկները, իսկ խորհրդային Հայաստանի տարագայում այն լուրջ անցում էր՝ չկանխորոշելով ոչինչ: Այսպիսով, ճիշտ էր Ալ. Խասիսյանը, երբ լուրջում էր, որ՝ ըստ իրեն հասած տեղեկությունների և իր անձնական համոզման, Ադրբեջանը հեռությամբ հանձնվեց բոլշևիկներին, քանի որ հույս ուներ Կարմիր բանակի միջոցով և Թուրքիայի միջնորդությամբ լուծել սեփական սարածքային խնդիրները<sup>22</sup>: Դուրս է գալիս, որ Ադրբեջանից օգնություն ստանալը հայ բոլշևիկների կողմից միանություն էր: Այդ նրանք հասկացան Ն. Նարիմանովից օգնություն խնդրելուց անմիջապես հետո և «ամսամբության» կենտրոնը նախնական Գիլիջանից տեղափոխեցին Ալեքսանդրապոլ:

Պետք է նշել, որ Ադրբեջանի բոլշևիկների այս նկրտումներին լիովին համահունչ էր նաև Թիֆլիսի Կոմբյուրոյի

բոլշևիկների դաշվածքը: Ս. Օրջոնիկիձե միայն մայիսի 22-ին է հեռագրում Վ. Լենինին, թե ՀՀ-ում ծավալվել է բանվորագյուղացիական ամսամբություն, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Ղարաֆիլիսայի, Գիլիջանի և Քարվանսարայի կայագրերը ամսամբել են և հռչակել բանվորագյուղացիական իշխանություն: Նշվում էր, որ նրանք օգնություն են ստանում Խորհրդային Ռուսաստանից, չնայած ավելացնում էր, որ Ալեքսանդրապոլի հեղկոմը գոյատևել է միայն 4 օր<sup>23</sup>: Ի՞նչ ենք տեսնում: Մայիսի 22-ն է, այսինքն՝ մայիսյան ելույթները ՀՀ-ում ամբողջությամբ ճնշված են, միայն Չանգեզուրն է, որ նոր են միայն սկսվում բոլշևիկյան ելույթներ<sup>24</sup>: Ս. Օրջոնիկիձե կամ տեղյակ չի եղել հայ բոլշևիկների ելույթների մասին, ինչն անհավանական է, կամ էլ դիտարկում էր, որ հաղորդում դրանց մասին: Երբորդ տեսակետն այն է, որ քանզի ՀՀ խորհրդայնացումը, անկասկած, մայիսին Խորհրդային Ռուսաստանի օրակարգում դրված չէր, ամա հայ բոլշևիկների ելույթների մասին ժամանակին կամ ուշացումով Մոսկվային տեղեկացնելը ոչ մի նշանակություն չուներ: Կարելի է կարծել, որ Ս. Օրջոնիկիձեի հեռագրի նույնպես Չանգեզուրում նոր-նոր սկսվող բոլշևիկյան ելույթներից օգուտ փառելն էր, այսինքն՝ այդ դաշվածքով այնտեղ Կարմիր բանակի գործառնաքննում մտնելը: Այսպես թե այնպես, բայց վերաբերալիս խոսում է այն մասին, որ հայ բոլշևիկները չէին կարող հույս կադել ո՛չ Ադրբեջանի և ո՛չ էլ Խորհրդային Ռուսաստանի օգնության հետ՝ ՀՀ-ն խորհրդայնացնելու հարցում: Այդ նրանք հասկացել էին դեռևս մայիսի 3-ից 5-ն ընկած ժամանակահատվածում և ավելի դարձ գիտակցեցին մայիսյան ելույթների վճռորոշ օրերին, երբ Ալեքսանդրապոլում և մյուս ֆառաքներում հաստատվել էր նրանց իշխանությունը: Մայիսի 12-ին Թիֆլիսից Ղարաֆիլիսա հասավ Կոմբյուրոյի սուրհանդակ ոմն Բալյան, որը Հ. Նազարեթյանի անունից դաշվածքեց հայ բոլշևիկներից անմիջապես մարդ ուղարկել Ադրբեջան և հաղորդել, թե որտեղ է գտնվում Կարմիր բանակը: Այն տեսք է օգնության նետվել կրիսիկական դրության մեջ գտնվող Թիֆլիսի Կոմ-

<sup>22</sup> Խասիսյան Ալ., էջ 252-253:

<sup>23</sup> Ավետիսյան Հ., Մայիսյան ամսամբությունը Կոմիսսարների նյութերում (1920 թ. մայիս-սեպտեմբեր), Ե., 1981, էջ 9-10:

<sup>24</sup> «ԲԵՀ», 1998, թիվ 1, էջ 22-23:



բյուրոյին<sup>25</sup>: Աղսաֆայում սեղակայված Կարմիր բանակի 32-րդ դիվիզիան, որի հետ էին կապված հայ բոլշևիկների բոլոր հույսերը, ղեկ է լսալ ուղարկվել Կովբյուրոյին օգնության: Չնայած օրեր անց իրավիճակը փոխվեց, և այդ դիվիզիան հրաման ստացավ Եւրօվել հարավ ու իրել Դարաբաղը:

Տարիներ Եարունակ խորհրդահայ ղասմաբանները հայ բոլշևիկների մայիսյան ելոյթները որակել են որդես «Հայաստանում Բաղաբական իճխանոյունը գրավելու նախաղայման»<sup>26</sup>, իսկ սփյունբահայ ղասմաբանները՝ որդես հարված նոր կազմավորված և ամրաղնդվող հանրաղեսոյան թիկունքին<sup>27</sup>: Որդես ղասասխան այն բանին, թե ինչո՞ւ «ամղսամբած» հայ բոլշևիկներին օգնոյան չեկավ Կարմիր բանակը, խորհրդահայ ղասմաբանները սովորաբար ղասճառ էին բերում այն, որ Կարմիր բանակը գրաղված էր Գանճակի (Գյանչա) և Չաբաբալայի հակահեղափոխական ելոյթների ճնճամբ և ղայբարով Դարաբաղում ու Չանգեղուրում, որոնք ճեղեղին Կարմիր բանակի ուճաղրոյունը<sup>28</sup>: Դուրս է գալիս, որ ինչ-որ հակահեղափոխական խռովոյան ճնճումը կամ էլ Դարաբաղի և Չանգեղուրի դեմ ղայբարը իմա՞ դրանց նվաճումը առավել կարևոր էին Խորհրդային Ռուսաստանի համար, Բան մի ամբողջ հանրաղեսոյան խորհրդայնաղումը: Մեր ուսումնասիրոյունից դուրս է այն խնդրի Բննոյունը, թե իսկաղես ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստան օգնոյան չեկավ հայ բոլշևիկներին, սակայն վերոհիճյալ ղասճառաբանոյունները մնում են սոսկ «արդարաղման» խղճուկ փորճեր:

Մեղանում սարբեր առիթներով հաճախ են խոսում այն մասին, որ ՀՀ կառաղարոյունը ճիճ կվարվել, եթե 1920 թ. մայիսին իճխանոյունը զիղեր բոլշևիկներին: Ոմանք նոյնիսկ դասողոյուններ են անում այն մասին, թե ինչղիսին կլինեին Հայաստանն ու նրա սահմանները, եթե ՀՀ խորհրդայնաղումը սեղի ունենար մայիսին: Մեր Բննոյունը ցոյց սվեց, որ իրավիճակը 1920 թ. մայիս ամսին նման դասողոյունների սեղ չեր թողնում վերոհիճյալ և հետևյալ ղասճառներով.

1. ՀՀ կառաղարոյանը դրսից իճխանոյունը բոլշևիկներին զիղելու կամ հանճնելու որևէ ղահանջ չի ներկայաղվել,

2. որբան հայնի է, նման ղահանջ կոնկրետ սեղսոսով ՀՀ կառաղարոյանը չի ուղղվել նոյնիսկ ՀՀ-ում

մայիսյան ելոյթները կազմակերղած հայ բոլշևիկների կողմից,

3. եթե անգամ նման ղահանջ ՀՀ կառաղարոյան առաջ դներ ՀՀ բոլշևիկյան մարմինը՝ Արմենկոմը<sup>29</sup>, աղա իճխանոյունը հանճնել այողղիսի թոյլ և անկազմակերղ կառոյցի ուղղակի սխալ կլիներ,

4. ՀՀ-ն լեփ-լեցուն էր արևմտահայ գաղթականներով, որոնց համար խորթ էր բոլշևիկյան գաղաղարախոսոյունը, և հենց նրանք էին, որ բոլոր Չանգերը ներդեղին մայիսյան ելոյթների ճնճան գործում<sup>30</sup>,

5. իրենց լողունգներում հայ բոլշևիկներն օգսաղործում էին այնղիսի արսահայսոյուններ, ինչղես օղինակ՝ «Կեցցեն Կարմիր Աղրբեղանն ու Կարմիր Թուրքիան», ինչղես նակ հենվում էին ՀՀ-ում բնակվող թրոյան վրա<sup>31</sup>: Դա նղասում էր այն բանին, որ ճասերը կամ հեռանում էին նրանց ճարբերից, կամ էլ խուսաղում նրանցից: Ըստ որում, հենց այն, որ հայ բոլշևիկները հոյս էին կաղում թրոյան հետ, ցոյց էր սաղիս, որ նրանք չէին վայելում բնակչոյան լայն մասների համակրանքը և զղում էին մարղկային ռեսուրսների ղակաս: Մակայն հայ ժողովուրղը չեր մոռաղել իր ոչ վաղուցվա թճամիներին՝ Թուրքիային ու Աղրբեղանին, որոնք, ինքնրսինբյան հասկանաղի է, չէին դաղարել այողղիսին լինելուց,

6. ի վերջո, ելնելով վերոհիճյաղից՝ բոլշևիկների մայիսյան ելոյթները ղեկ է որակել սոսկ որդես խռովոյուններ, որոնց կազմակերղիչների հետ իճխանոյունը հանճնելու մասին խոսելն ինքնին անիմաստ ու անլուրջ է: ՀՀ-ն երկու սարվա դճվարին ճանաղարհ անցած և թրծված ղեսոյուն էր, որ հիմնվել էր թուրբական բանակի դեմ սարած փառաղանճ հաղթանակների հիմքի վրա: Թեկուզ և աղբաս ու սոլյալ գաղթականներով լեցուն, այն կազմակերղված ղեսոյուն էր, իսկ յուրաբանչյուր ղեսոյան և նրա կառաղարոյան

<sup>25</sup> «ՄԱՀ», էղ 106:

<sup>26</sup> Ավեսիսյան Հ., էղ 18:

<sup>27</sup> Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ-բոլշևիկ յարաբերոյունների ոլորում 1917-1921 թթ., Ե., 1997, էղ 170:

<sup>28</sup> Кадишев А., с. 289.

<sup>29</sup> Իմա՞ Ռ-Կ(Բ)Կ Հայաստանի կոմիսե:

<sup>30</sup> Մասունի Կ., էղ 122:

<sup>31</sup> Անղ:



դարձականությունն է դաժժանել սեփական ղեկավարությունը ամեն ժամ խռովությունից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչո՞ւ, իմանալով, որ դրսից օգնություն չի գալու և վստահ չլինելով սեփական ուժերին, հայ բոլշևիկները սկսեցին «աղքատամբությունը», աղա դասասխանը հստակ է. նրանք համոզված էին, որ եթե «աղքատամբություն» սկսեն և կանգնեցնեն Խորհրդային Ռուսաստանին և Կարմիր բանակին փաստի առաջ, կսխդեն նրանց կամա թե ալկամա գալ իրենց օգնության: Մակայն նրանց այդ ծրագրերն ի դերս ելան:

Ի վերջո սանք մեր եզրակացությունները և գնահատականները.

1. բոլշևիկների մայիսյան ելույթները ՀՀ-ում ի սկզբանե դասադարձված էին, քանի որ ժողովրդի բոլշևիկները թույլ էին ու անկազմակերպ,

2. նրանք զրկված էին դրսի օգնությունից,

3. նրանք օգնագործում էին սխալ և չարդարացված կարգախոսներ՝ իրենց դեմ հանելով արևմտահայ գաղթականությանը,

4. նրանք հենվում էին ՀՀ թրմության վրա և հույս կադում նույնիսկ Թուրքիայի օգնության հետ,

5. բոլշևիկները չէին վայելում ժողովրդի լայն մասսաների համակրանքը, ինչը նդաստեց նրանց «աղքատամբության» ճնեմանը:

Այս ամենի լույսի սակ հայ բոլշևիկների ելույթը միանեանակ ղեկ է որակել որդես խռովություն, որը հարված հասցրեց ՀՀ-ին՝ նդաստելով նրա թուլացմանը և թուրմական հարձակման համար հարթելով հեոս ճանադարհ: ՀՀ-ից հեռանալուց հետո նույնիսկ նրանք գունդ կազմեցին Ադրբեյջանում և կովում էին ՀՀ-ի դեմ<sup>32</sup>:

<sup>32</sup> Токарежский Е., Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, с. 277:

**Վահե Սարգսյան**

*«Միտք» վերլուծական կենտրոնի վերլուծաբան*

## Չավախքում ստեղծվելիք հայկական պետական բուհը հայության համար պետք է դառնա համազգային խնդիր

**Ս**անցիտե (Մեսխունիք)-  
Չավախք-Ծավկա (այ-  
սուիտե՝ Չավախք)  
տարածաշրջանի կրթամշակու-  
թային կյանքի «մահվան» մա-  
սին բազմիցս անդրադարձել  
ենք<sup>1</sup>: Խոսվել է նաև հանրակրթ-  
թական ոլորտի հիմնախնդիրնե-  
րի և այդ ուղղությամբ Վրաստա-  
նի վարած քաղաքականության  
մասին<sup>2</sup>: Ներկա ուսումնասի-  
րության մեջ փորձ ենք անելու  
մանրակրկիտ ձևով ներկայաց-  
նելու Չավախք տարածաշրջա-  
նի բուհական կյանքին վերաբե-  
րող խնդիրները: Մի հանգա-  
մանք, որը մեծ դեր ունի Չա-

վախքի երիտասարդ սերնդի ճակա-  
տագրի որոշման գործում:

Չավախքում պետական բարձ-  
րագույն ուսումնական հաստա-  
տությունների հիմնադրման հարցը  
հայ-վրացական պաշտոնական  
հանդիպումներում սկսեց շոշափվել  
1990-ական թթ. կեսերին, երբ ՀՀ նա-  
խագահ Լ. Տեր-Պետրոսյանը 1996  
թ. հունիսին Վրաստան կատարած  
իր այցի շրջանակներում եղավ նաև  
խնդրո առարկա տարածաշրջա-  
նում<sup>3</sup>: Չնայած Լ. Տեր-Պետրոսյանի  
այցը ընդհանրապես ուղղված չէր  
տարածաշրջանի զարգացմանն ու  
կնճռոտ խնդիրների լուծմանը, այլ

կրում էր նախընտրական բնույթ,  
այնուամենայնիվ այցը եզակի  
էր. հենց տեղում, նախագահնե-  
րի մակարդակով, պայմանա-  
վորվածություն ձեռք բերվեց  
տարածաշրջանում բացել ինչ-  
պես Թբիլիսիի, այնպես էլ  
Երևանի բուհերի մասնաճյու-  
ղեր<sup>4</sup>: Սակայն, ինչպես պարզ  
դարձավ հետագայում, պայմա-  
նավորվածությունը ի կատար  
ածվեց միակողմանի. 2002 թ.  
փետրվարի 7-ից մինչև 2007 թ.  
ուսումնական տարվա ավարտը  
(հինգ տարի) Ախալքալաքի  
նախկին պրոֆտեխուսումնարա-  
նի շենքում գործեց Իվ. Չավա-



ՀՀ և Վրաստանի հանրապետության նախագահներ  
Լ. Տեր-Պետրոսյանը և Էդվարդ Շևարդնաձեն 1996 թ.

խիշվիլու անվան ԹՊՀ-ի Ախալքալաքի մասնաճյուղը: Տխրահոշակ այդ մասնաճյուղը ևս մի չհաջողված փորձ էր՝ փոխելու տարածաշրջանի էթնոժողովրդագրական նկարագիրը: Մասնաճյուղում, ուր ուսուցումն իրականացվում էր միայն վրացերենով, բազմապիսի արտոնություններով սովորում էին ոչ թե տեղացի, այլ Վրաստանի մյուս

տարածաշրջաններից եկած ուսանողները, որոնք մասնագիտանալով տարբեր ոլորտներում՝ նշանակվելու էին տեղում տարբեր աշխատանքների: Ախալքալաքի մասնաճյուղի «առաքելությունը» պերճաշուք կերպով ներկայացնում է հենց ինքը՝ մասնաճյուղի տնօրեն, պատմաբան Ռոին Կավրելիշվիլին. «Այս մասնաճյուղը առաջին հերթին, ինչ խոսք, ծառայում էր ինտեգրմանը:

Այստեղ տեղական բնակչության հետ միասին գալիս էին ուսանողներ Վրաստանի այլևայլ տարածաշրջաններից, մասնավորապես՝ Սամտրեդիից, Ասպինձայից, Կախեթից, Բաթումից... Մինչ այդ տեղի վրացի բնակչությունը չէր ճանաչում Վրաստանի այլ մասերի բնակչությանը: Համալսարանի շնորհիվ նրանք բարեկամացան, շատերը ընտանիքներ կազմեցին: Արևմուտքից ժամանած մասը մնաց Ախալքալաքում, բաշխվեցին դպրոցներում աշխատանքի: **Այնպես որ, համալսարանը իր գործը կատարում էր** (ընդգծումը մերն է՝ Վ. Ս.): Լուսավորության նախարարության նոր նախագիծը, հավանաբար, այս գործը կշարունակի»<sup>5</sup>: Իսկ այդ «նոր նախագիծը» վերաբերում էր միասնական բակալավրական ծրագրով քոլեջի ստեղծմանը, որն այժմ Ախալքալաքում արձակում է իր նորելուկ ծիլերը:

Հակառակ սրան տարածաշրջանի երիտասարդությունը շարունակում է հայկական և որակյալ կրթություն ստանալու

1. Տես՝ «Հայ-վրացական կրթամշակութային հարաբերությունների հետխորհրդային գոյության վախճանը. Սամցխե-Չավախք-Ծալկայի մշակութազերծումը», «Չավախքը 1988-2008 թթ.» (հողվածների ժողովածու), Երևան, 2009, էջ 91-109:
2. Տես՝ «Սամցխե-Չավախքի ժողովրդագրական և կրթական 20-ամյա կյանքը 1988-2008 թթ.», «Չավախքը 1988-2008 թթ.» (հողվածների ժողովածու), Երևան, 2009, էջ 288-314:
3. Լրացուցիչ նշենք, որ Հայոց նորանկախ պետականության պատմության մեջ առաջին և, ցավոք, վերջին դեպքն էր, երբ նախագահն այցելում էր Սամցխե-Չավախք-Ծալկա տարածաշրջան. ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը, չնայած շատ հարցերում իր որդեգրած ազգային քաղաքականությանը, այնուամենայնիվ, տասը տարիների ընթացքում չայցելեց տարածաշրջան՝ իր քաղաքականության մեջ այդպես էլ չկարողանալով կարևորություն տալ վերջինիս դերին ու նշանակությանը:
4. «Ազգ», 07.06.1996:
5. [http://www.bagin.info/default.asp?Lang=\\_Am&NewsID=888&SectionID=0&Date=07/19/2008&PagePosition=17](http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=888&SectionID=0&Date=07/19/2008&PagePosition=17)

համար բախել Երևանի կամ հայաստանյան այլ բուհերի դռները:

Նշենք, որ պետական հայկական բուհերի փոխարեն հետխորհրդային շրջանում Ջավախք տարածաշրջան են մուտք գործել հայաստանյան և այլ ոչ պետական բուհերի մասնաճյուղեր կամ զանազան միջին մասնագիտական հաստատություններ: Պարզ է, որ վերջիններս հետապնդում են ոչ թե ազգային կամ ռազմավարական նպատակներ, այլ ձգտում են հնարավորինս ավելացնել իրենց շահույթները:

Այդպիսիներից՝ Երևանի տնտեսա-իրավագիտական համալսարանը (ԵՏԻ) արդեն երկար ժամանակ է, ինչ համալսարանի տեսքով իր մասնաճյուղն ունի նաև Ջավախք տարածաշրջանի Ախալքալաք քաղաքում:

Վերջին տարիներին Ախալքալաքում գործում է նաև Իլյա Ճավճավաձեի անվան «Յոդնա» համալսարանը: Վերջինս ևս մասնավոր հաստատություն է և ընդհանրապես հեռու է ուսուցման համապատասխան որակ ապահովելուց:

Թեև ուսման խիստ ցածր որակին և բուհի ոչ պետական լինելուն՝ այնուամենայնիվ Ախալքալաքի վերոնշյալ երկու հաստատություններն ինչ-որ տեղ հնարավորություն են տալիս տեղի երիտասարդությանը՝ ընդհանրապես գուրկ չլինել բարձրագույն ուսումնական հաստա-



Երևանի տնտեսա-իրավագիտական համալսարանի (ԵՏԻ) մասնաճյուղը Ախալքալաքում



ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղը

տություններ ոտք դնելու հնարավորությունից:

Ավելացնենք, որ նախկին Քրրք Քրրքորյանի անվան Երևանի տնտեսա-իրավագիտական համալսարանը քոլեջի տեսքով գործող մասնաճյուղ ունի նաև Ջավախքի Նինոծմինդա (Բոգդանովկա) քաղաքում: Վերջին շրջանում քոլեջը վերա-

գրանցվում է բժշկականի: Քոլեջի տնօրինության խոսքերով՝ եթե վերագրանցման հետ բարություններ չառաջանան, ապա այս տարվա 2-րդ կիսամյակից քոլեջը կսկսի գործել: Քոլեջի տնօրինությունը ցանկացողներին կարող է օգնել՝ ընդունվելու նաև Երևանում: Միջնակարգ կրթություն ունեցողների համար քոլեջում ուսման տևողությունը

երկու տարի է, իսկ իննամյա կրթական վկայական ունեցողների համար ուսման տևողությունը սահմանված է երեք տարի ժամկետով: Ուսման վճարը տարեկան կազմելու է նախկին 150 ԱՄՆ դոլարի փոխարեն՝ 250 դոլար:

Քաղաքական Չավախքի մաս կազմող մեծամասամբ հայաբնակ Ծալկայում նույնպես իսպառ բացակայում են հայկական պետական կամ ոչ պետական բուհերը: Տեղի քաղաքական ակտիվիստ-պաշտոնյաների կողմից պետական կամ մասնավոր բուհ հիմնելու ուղղությամբ անգամ չի եղել որևէ նախաձեռնություն: Նշենք, որ արդեն 17 տարի Վրաստանի այլ վայրերից խնդրո առարկա տարածաշրջան վրացի երիտասարդների վերաբնակեցման քաղաքականություն է իրականացնում նաև ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղը<sup>6</sup>, իսկ Ախալցխայի միակ հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումի հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետը փակվել է դեռևս Չ. Գամսախուրդիայի իշխանության օրոք: Չ. Գամսախուրդիային ուղղված դիմումի մեջ Ախալքալաքի շրջխորհրդի գործկոմի ներկա-

յացուցիչները բողոքում էին, որ «...Չավախքի հայ երիտասարդությունը, փաստորեն, դրանով զրկվում է Ախալցխայում սովորելու հնարավորությունից...»<sup>7</sup>:

Հետաքրքրական է, որ ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում իրականացվել է խաբկանքի նմանվող մի հետաքրքրական գործընթաց, որը մինչ օրս թյուր մեկնաբանությունների տեղիք է սովել հայկական և վրացական շրջանակներում: Այդ շրջանակների մոտ հաճախ կարելի է լսել այն մասին, որ ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում կա հայկական բաժին: Եթե իրոք կա այդպիսի բաժին, ապա պետք էր, որ հայ ուսանողությունն այնտեղ սովորեր տարբեր մասնագիտություններ (իրավագիտություն, տնտեսագիտություն, լրագրողական արվեստ և այլն), սակայն մեր ուսումնասիրություններն իսպառ հօդս են ցնդեցնում այդ պատրանքը: Իրականում «հայկականության գոյությունը» ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում եղել է օտար լեզուների ֆակուլտետում հայկական լեզվի և գրականության ուսումնասիրման լսարանի տեսքով: Վերջինս կարելի է համեմատել, օրինակ, ԵՊՀ ռոմանագերմանական ֆա-

կուլտետում իսպաներենի կամ իտալերենի ուսումնասիրման ծրագրի հետ: Այս ամենի եզրակացությունը հետևյալն է. Չավախքի հայությանն իր պատմական հայրենիքում ստիպում են սեփական ազգային լեզուն (հայոց լեզուն) դիտարկել իբրև օտար լեզու... Այս է ԹՊՀ-ի՝ Չավախքում ներկայացվածության ողջ «փայլն» ու իմաստը:

Այսպիսի պայմաններում, բնականաբար, իրեն և սեփական ազգային արժանապատվությունը հարգող յուրաքանչյուր հայ երիտասարդ ոտք չի դնի այս հաստատություն: Եվ իրոք՝ գործընթացները հանգեցրին նրան, որ վերջին՝ 2008-2009 թթ. ուսումնական տարում հայ ուսանողների համապատասխան թվաքանակի բացակայության պատճառով այլևս չբացվեց ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղում հայ ուսանողի ստորացման խորհրդանիշ՝ «հայոց լեզվի և գրականության ուսումնասիրման» վերոհիշյալ լսարանը: Այնտեղ դասավանդող տեղի հայ և ազգանվեր երիտասարդ դասախոսներն էլ այսպիսով հեռացան:

Բացի ԹՊՀ-ի Ախալցխայի (Մեսխեթի) մասնաճյուղից (որը վերջին շրջանում համալսարա-

6. [http://www.bagin.info/default.asp?Lang=\\_Am&NewsID=793&SectionID=0&Date=07/31/2008&PagePosition=21](http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=793&SectionID=0&Date=07/31/2008&PagePosition=21): Վերջինս նույնպես հայտնվել է փակման եզրին, դրա դեմ հանդես եկած Ախալցխայի վրացի բնակիչներից Վրաստանի կենտրոնական իշխանություններին հասցեագրվել է նաև ուղերձ: 2007 թվականին լուծարվեց նաև նույն քաղաքականությունն իրականացնող ԹՊՀ-ի մեկ այլ՝ աղբբեջանաբնակ Մառնեուլիում գործող մասնաճյուղը, տես՝ [http://www.bagin.info/default.asp?Lang=\\_Am&NewsID=1610&SectionID=0&Date=07/31/2008&PagePosition=1](http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=1610&SectionID=0&Date=07/31/2008&PagePosition=1)

7. Обращение президенту Республики Грузия гос. Звиаду Гамсахурдия (դիմումն անրվակիր է – Վ. Ս.):

նից վերածվել է ինստիտուտի), Ախալցխայում գործում են նաև ընդհանուր թվով 4 վրացական քոլեջներ: Բաղդատենք Սամցխե-Մեսխունիք գավառի (Ախալցխայի գավառ) հայ և վրացի բնակչությունը. 2002 թ. Վրաստանի պաշտոնական տվյալներով Սամցխեի կազմում գտնվող չորս մունիցիպալիտետներում (նախկին Ադիգենի, Ախալցխայի, Բորժոմի և Ասպինձայի շրջաններ) միասին վերցված ապրում են 86.305 վրացիներ և 22.974 հայեր: Հայկական և վրացական բուհերի հարաբերակցությունը համեմատության մեջ դնելով ազգային հարաբերակցության հետ՝ պարզորոշ կարելի է ուրվագծել Վրաստանի խտրական և միակողմանի քաղաքականությունը նաև այս ոլորտում: Պատկերը կամբողջանա, եթե այս բոլորը դիտարկենք Սամցխե-Չավախք-Ծավկա ամբողջական տարածաշրջանի համատեքստում: Տարածաշրջանի ժողովրդագրական ցուցանիշները հետևյալն են. 230.198

ընդհանուր բնակչության թվակազմ (100%), որից՝ 124.198 հայեր (54%), 97.995՝ վրացիներ (42,6%), մնացածն՝ այլազգիներ (3,6%): Այս թվաչին հարաբերակցության հիմքի վրա գոյություն ունեցող վրացական պետական և մասնավոր բուհերի և միջին մասնագիտական հաստատությունների գոյությունը, մյուս կողմից՝ հայկական մեկ մասնավոր և խղճուկ բուհի մասնաճյուղի գոյությունը ևս վրացական իշխանությունների վարած խտրական քաղաքականության լավագույն օրինակ են:

ՀՀ Կրթության ու գիտության նախարարության կողմից բազմիցս արված՝ Սամցխե-Չավախք-Ծավկա տարածաշրջանում հայ վրացական համատեղ բուհ հիմնելու մասին առաջարկները շարունակում են քաղաքավարի մերժվել վրացական իշխանությունների կողմից: Այդ մասին պարզորոշ հայտարարվել է և Վրաստանի նախկին ԿԳ նախարար Ա. Լոմայայի<sup>8</sup>, և ներկա նախարար Գ. Նոդիայի կողմից: Սամցխե-Չավախք-Ծավկա տարածաշրջանի երիտասարդության՝

մայրենի լեզվով տեղում բարձրագույն կրթություն ստանալու հույսերը վերջնականապես մարեցին հատկապես Գ. Նոդիա – Ս. Սեյրանյան վերջին՝ 2008 թ. հունիսյան հանդիպումից հետո<sup>9</sup>, երբ հայկական կողմը կրկին հանդես եկավ նման առաջարկով, որին ի պատասխան՝ Գ. Նոդիան նշեց, որ «մինչ օրս Վրաստանը միջպետական համալսարան ունենալու նախադեպ չի ունեցել, եւ նման կրթօջախ հիմնելը կարող է ներպետական իրավաբանական դաշտին չհամապատասխանել»<sup>10</sup>: Հանդիպման ժամանակ տեղի ունեցած բանակցություններից պարզ է դառնում, որ կողմերը փոխադարձ համաձայնության չեկած հարցերի շուրջ ստեղծել են աշխատանքային խմբեր<sup>11</sup>. հայ-վրացական համալսարան բացելու գործընթացը նույնպես «քննվելու է» աշխատանքային խմբերի կողմից...<sup>12</sup>:

Անհրաժեշտ է հայկական պետական բուհի հիմնումն Ա-

8. Դեռ 2007 թ. նոյեմբերին Վրաստանի ԿԳ նախարար Ալեքսանդր Լոմայան հայտարարել է, որ Վրաստանում հայկական դպրոցներ և բուհեր չեն բացվելու, քանզի դրա ոչ մի անհրաժեշտություն չկա: Այդպես է նա մեկնաբանել Հայաստանի գիտության և կրթության նախարար Լևոն Սկրտչյանի հայտարարությունը, որը գտնում է, որ Վրաստանում անհրաժեշտ է բացել մի քանի հայկական դպրոցներ և հայ-վրացական բուհ: Սամցխե-Չավախքում հայ-վրացական բուհ բացելու մասին հայկական կողմի պահանջների կապակցությամբ Լոմայան հայտարարել է, որ ներկայումս Վրաստանում չկան մասնագետներ, որոնք կկարողանան դասավանդել այդ բուհում: Նախարարը հայտնել է, որ Ի. Ճավճավաճեի անվան համալսարանում (համալսարանը նախկինում կոչվում էր Ս. Սաբա-Օրբելիանու անվան Թբիլիսիի պետական մանկավարժական համալսարան) գոյություն ունի հայոց լեզվի և գրականության ամբիոն: Այն հայալեզու դպրոցների համար մանկավարժներ է պատրաստում: Լոմայայի խոսքերով, Վրաստանի քաղաքացիները ցանկանում են բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանի պետական լեզվով, իսկ նրանք, ովքեր ցանկանում են կրթություն ստանալ հայերենով, գնում են Հայաստան և այնտեղ են կրթություն ստանում: Տես՝ <http://www.panorama.am/am/education/2007/08/22/krtutyun/>:

9. 2008 թ. հունիսի վերջին ՀՀ այցելեց Վրաստանի ԿԳ նախարար Գիա Նոդիան: Բազմաթիվ լրատվամիջոցներ անդրադարձան այս այցի շրջանակներում տեղի ունեցած քննարկումներին ու ստորագրված պայմանագրերին, սակայն ոչ մի ՉԼՄ տեղեկատվություն չի տվել այն մասին, որ հարևան երկրների նորանկախ պատմության մեջ Վրաստանի ԿԳ նախարարը ՀՀ էր այցելում առաջին անգամ:

խալցիսայում: Ինչո՞ւ հենց այնտեղ:

Ներկայումս շատ է խոսվում հայ-վրացական պետական բուհի հիմնման մասին Ջավախքում: Սակայն եթե հարց առաջադրվի, թե Ջավախքի ո՞ր քաղաքում, ապա կարելի է լսել տարբեր, ընդ որում՝ իրարամերձ կարծիքներ: Շատերի կողմից հիմնավորվում է այն տեսակետը, որ այդ արդեն «մեծ մեսիան» հիշեցնող բուհը պետք է բացվի Ախալքալաքում՝ որպես Ջավախքի հայահոծ հատվածի կենտրոն:

Ախալցխայում հայկական պետական բուհ բացելու մասին մեր հիմնավորումները հետևյալներն են.

- Ջավախք տարածաշրջանի ապագան անհնար է տեսնել առանց Ախալցխայի (Մեսխունիքի) հատվածի, որի սիրտը հենց Ախալցխա քաղաքն է: Մյուս կողմից՝ Ախալցխայի գավառն (Մեսխունիք գավառ) իր պատմական անցյալով և քաղաքական ներկայով Ջավախքի անքակտելի մասն է: Ուստի՝ հրատապ խնդիր է Ախալցխայի հայկական դիմագծի պահպանումն ու զարգացումը:

- Ախալցխայի հատվածը Ջա-

վախքի և ՀՀ-ի համար ունի ռազմաստրատեգիական անփոխարինելի նշանակություն, որի հայկական լինելը վերջիններիս հնարավորություն է տալու ապագայում Աջարիայի վրայով ծով դուրս գալ:

- Առանց Ախալցխայի՝ անհնար է Ջավախքում ձևավորել հայկական հզոր գործոն, որը հնարավորություն կունենա վերածվելու ինքնուրույն միավորի: Այս իմաստով անիմաստ է խոսել Ջավախքի ինքնավարության կամ վերջինիս հարցի արդարացի լուծման մասին, եթե Ախալցխան դադարի հայկական լինելուց:

- Ախալցխան Վրաստանի՝ խորհրդային և հետխորհրդային շրջանում վարած ժողովրդագրական քաղաքականության զոհն է, և որպես այդպիսին՝ այն լիովին համեմատելի է խորհրդային տարիներին ադրբեջանացած Ադրամի, Խոջալուի, Հյուսիսային Արցախի և մյուս շրջանների հետ: Ուստի Ախալցխա-Մեսխունիքի հայկական դիմագծի վերականգնումը հայության համար, վերոնշյալներից զատ, բարոյական խնդիր է:

Ախալցխայի վերահայկականացման մի ճանապարհն այնտեղ հայկական պետական բուհի հիմնումն է:

Հավելյալ նշենք, որ խորհրդային տարիներին, երբ քաղաքում

գործում էր Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումի հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետը, քաղաքը լցված էր հայ ուսանողներով, հանրակացարաններում, վարձով բնակարաններում, զբոսայգիներում վերջիններս հավելյալ եռուգետ էին հաղորդում քաղաքին. Ախալցխայում հայկական շունչ էր ամենուր: Այս այն դեպքում, երբ եղածը մի բուհ չէր, այլ՝ մի հասարակ միջին մասնագիտական հաստատության նույնքան հասարակ մի հաշվապահական բաժին: Չ. Գամսախուրդիայի քաղաքականությունը վերջակետ դրեց այդ ամենին: Հայությունն այս ամենին հակադարձեց «վրաց թագավորին» ուղղված մի խղճուկ բողոքագրով...

Այն մտավախությունները, որ Ախալցխան հեռու է Ախալքալաք-Ծալկա հատվածից, որի պատճառով Ջավախքի այս հատվածի ուսանողությունը կարող է ունենալ ինչ-ինչ դժվարություններ, հեռու են իրականությունից. 250-300 կմ ճանապարհ կտրող-անցնող և Երևան հասնող Ախալքալաք-Ծալկայի ուսանողի համար բոլորովին դժվար չէ անցնել այդ ճանապարհի մի մասը և հասնել Ախալցխա: Հարկ համարենք հի-

10 <http://yerkir.am/newspaper/?id=884>:

11. Տես՝ նույն տեղում:

12. [http://www.bagin.info/default.asp?Lang=\\_Am&NewsID=1520&SectionID=0&Date=07/22/2008&PagePosition=2](http://www.bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=1520&SectionID=0&Date=07/22/2008&PagePosition=2):



շեցնելու, որ այս դեպքում Ախալցխայի ուսանողությունը բուհ կընդունվի հենց տեղում:

Չավախքում պետական բուհի հիմնումը միայն ուսանողներից տեղում կրթվելու հնարավորության ընձեռում չէ. լրացուցիչ խթան է՝ Չավախքում պրոֆեսորա-դասախոսական, գիտական և այսպիսով՝ մտավորական խավի վերածնվածության գործում: Հատուկ քաղաքականության շնորհիվ դեպի Չավախք կգործուղվեն համապատասխան մասնագետներ՝ ՀՀ-ի և սփյուռքի տարբեր հաստատություններից: Այդ նույն քաղաքականությունը կամային հատկանիշներ կձևավորի նաև ծագումով Չավախքից, ներկայումս ՀՀ-ի տարբեր բուհերում

դասավանդող դասախոսների շրջանում, որոնց մոտ ի վերջո կզարթնեն խիղճը և պատենական զգացումները՝ ծննդավայր-հայրենիքին օգտակար դառնալու իմաստով: Ի վերջո՝ ով չի ցանկանա, թեկուզ ժամանակի մի փոքր հատված, գործել կամ դասավանդել հրաշագեղ Ախալցխայում, որն իր մաքրությամբ, իր պատմական անցյալով, իր դրախտային բնաշխարհով աննկարագրելի մի վայր է...

Ինչո՞ւ վրացական կողմը կտրականապես մերժում է անգամ հայ-վրացական պետական համալսարանի հիմնումը: Պատասխանը պարզ է. հայ ուսանողությունը չնչին բացառություններով նախընտրելու է հայկական բաժինները, կրկին անտեսվելու է վրացերենը, կրկին վրաց ղեկավարությունը կանգնելու է

գլխացավանքների առջև: Այսպիսի բուհում մոտավորապես տեղի է ունենալու այն ամենը, ինչն այսօր տեղի է ունենում Չավախքի հանրակրթական դպրոցներում: Սա այն բնական գործընթացի արդյունքն է, երբ Թոեղքի լեռներից հարավ, Չավախքում բնակվող հայի համար վրաց քաղաքական և հոգևոր մշակույթն օտար է և հարյուրամյակներ շարունակ չի ընկալվում որպես այդպիսին: Եվ Վրաստանն այսօր անխնայաբարում է ոչ միայն դպրոցների, այլ նաև հատուկեցու մանկապարտեզների վրացականացման համար, և վերջինից սպասել նոր գլխացավանքի կամ բուհի հիմնում՝ առնվազն միամտություն է:

### Եզրահանգումներ

**Չավախքում հայկական ղեկական բուհ այսօր գոյություն չունի: Եղած հասուկենս մասնավոր համալսարաններն ընդամենը խաբկանք են:**

**Չավախքում վրացական ղեկական և մասնավոր բուհերի գոյությունը սարածաբանը վրացացնելու ֆաղափականության մի մասն է, որն արժանապատիվ է Վրաստանի՝ այս հարցում խսրական և հայաթափ ֆաղափականությունը:**

**Հայկական կողմի ֆաղափականությունը և ձեռնարկված ֆայլերը՝ Չավախքում ղեկական հայկական բուհի հիմնման ուղղությամբ, եղել են խիստ թերի, վախվորած և անարդյունավետ:**

**Չավախքում ղեկական հայկական բուհի ստեղծման վայրն անխիտ ղեկ է դիտարկել սարածաբանի վարչաֆաղափական, մեակութային և ռազմավարական կենտրոն ֆաղափ Ախալցխան:**

**Չավախքում հայկական ղեկական բուհի ստեղծման ուղղությամբ Վրաստանի բռնած անգիջող դիրքորոշումը հենց՝ այդ գործընթացի կարևորության, Չավախքի հայկականության ղահողանման և զարգացման գործում վերջինիս ունեցած անփոխարինելի դերի աղացույցն է:**

**Չավախքում ստեղծվելիք հայկական ղեկական բուհը, երբ օրակարգի վրա սարածաբանի հայկական լինել-չլինելու հարցն է, Չավախքի և համայն հայության համար ղեկ է դառնա համազգային խնդիր:**



## Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ստեղծումը.

*ոլորտի զարգացման հեռանկարների շուրջ*

**Կարեն Վերանյան**

*Քաղաքական հարցերի փորձագետ*

**Բ**ազմիցս է խոսվել Ադրբեջանի ռազմական ծախսերի շեղման ավելացման և վերջինիս կողմից Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին ղայմանագրի (այսուհետ՝ ԵՄ-ՁՈԻՊ)՝ իր մասով ստանձնած ղարսավորությունների խախտման մասին: Հարցեր, որոնք կարևորագույն նշանակություն ունեն հարավկովկասյան սարածաբանի անվտանգության ու կայունության ղահողանման շեսանկյունից:

Վերջին կես սասնամյակում, սակայն, Ադրբեջանի ռազմական համակարգում արձանագրված նոր միտումները թույլ են տալիս լուրջ վե-

րաղահումներով մոտենալ Հարավային Կովկասում հնարավոր կայունության հեռանկարներին ընդհանրադես: Խոսքը մասնավորադես վերաբերում է 2005 թ. դեկտեմբերին ստեղծված երկրի ռազմարդյունաբերության նախարարությանը, որի զարգացումը, երկրի ղեկավարության հավաստիացմամբ, կաղահովի սեփական ռազմարդյունաբերական համալիրի ձեվավորումը: Իհարկե, նորակազմ նախարարության առջև կանգնած են լրջագույն խնդիրներ՝ կաղված բարձր որակավորում ունեցող կաղրերի ղասրասման, ռազմական համակարգի ենթակառուցվածքների արղիականացման ու միջազգային չափանիշներին համաղասախանեցման հես: Ոլորտի զարգացումը,

մյուս կողմից, ղայմանավորված է խոսոնածավալ ներղումներով, ինչը չեն կարող աղահովել Ադրբեջանի ղեսական ու արսաբյուջեսային ֆինանսական բավական սուղ հնարավորությունները:

Նորակազմ նախարարության Երջանակներում սեփական ռազմարդյունաբերության զարգացման գործում Ադրբեջանի ղեկավարությունը լուրջ շեղ է հասկացնում արսափն ուժերի և, առաջին հերթին, Թուրքիայի ներգրավվածության աղահովմանը:

Ինչևէ, չնայած Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության առջև կանգնած լուրջ հիմնախնդիրների առկայությանը, այ-

նուսանդերձ, անհրաժեշտ է արձանագրել մեկ կարևորագույն հանգամանք, այն է՝ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության հիմնադրումով, անկախ ամեն ինչից և ոլորտի հեսագա զարգացման հեռանկարներից, երկրում դրվում են ռազմարդյունաբերական համալիրի ստեղծման առաջին քայլերը, որոնք սարածաբանի կայունության ատպահովման առումով, եթե չասենք դրական, ադա բավական թվացյալ «անսարբերությամբ» են ընկալվում ու գնահատվում միջազգային հանրության կողմից:

Հարևան հանրադեություն ռազմական համակարգում վերջին սարիներին արձանագրված միտումները կարևորագույն նշանակություն ունեն ՀՀ ազգային անվանագության համասեփսում և դախանջում են լրջագույն ու հեսևողական, բագմադլանային մոսեցումներ ցուցաբերել խնդրի առնչությամբ::

### Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը

ԽՍՀՄ փլուզումից ի վեր Ադրբեջանի ռազմարդյունաբերական ոլորտի արդիականացման հիմքերը դրվեցին միայն վերջերս, երբ 2005 թ. դեկտեմբերի 16-ին Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևը սոնագրեց Ադրբեջանի Հանրադեության ռազմական արդյունաբերության նախարարության ստեղծման մասին հրամանագիրը (թիվ 1181)<sup>1</sup>: Նորակազմ նախարարությունը ձևավորվեց Ադրբեջանի «Հասուկ մեփեմաճինության և կոնվերսավորման դեփական կոմիսեի» բագայի վրա:

Երկրի Ռազմական արդյունաբերության նախարարության ստեղծ-

ման մասին փաստաթղթում մասնավորաբար նշվում էր, որ «Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը հանդիսանում է գործադիր իճխանության կենտրոնական մարմին, որն իրականացնում է դաճեդանական, ռադիոէլեկտրոնային, սարփաճինական արդյունաբերության բնագավառում (այսուհես՝ ռազմական արդյունաբերության ոլորտ) դեփական փադափականություն» («Ընդհանուր դրույթներ», գլուխ առաջին, կեփ առաջին): Նդասակախարմար ենփ համարում ներկայացնել նորաստեղծ նախարարության՝ փաստաթղթում ամրագրված գործունեության հիմնական ուղղություններն ու դարսականությունները («Նախարարության գործունեության ուղղությունները», գլուխ երկրորդ, կեփ յոթերորդ).

• մասնակցում է ռազմական արդյունաբերության ոլորտում միասնական դեփական փադափականության ձևավորմանը և ատպահովում սվյալ փադափականության իրագործումը<sup>2</sup>,

• ատպահովում է ռազմական արդյունաբերության ոլորտի զարգացումը,

• դեփական դասվերի մասին գործող օրենսդրության համաձայն, դասրասում է ռազմական սեխնիկայի, գինամթերփի, ինճեներային սեխնիկայի, դախեսամասերի և ռազմական նշանակության այլ արսադրության ցուրջ ռազմական դասվերի դեփական ծրագրի նախագիծ և ներկայացնում այն Ադրբեջանի Հանրադեության կառավարությանը,

• ռազմական դասվերի ցուրջ հասսաված դեփական ծրագրի համաձայն, իր լիագորությունների ցրանակներում ատպահովում է ռազմական նշանակության արսադրության դասրասումը, կասարելագործումը, վերանորոգումը, ներմուծումն ու արսահանումը,

• գործող օրենսդրության համաձայն, ներկայացնում է առաջարկություն-



Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ցենփը

<sup>1</sup> Նախարարական կառույցի դաճեոնական անվանումն է Պաճեդանական արդյունաբերության նախարարություն:

<sup>2</sup> Փաստաթղթում «ռազմարդյունաբերության ոլորտ» կասեգորիան ներկայացվում է «դաճեդանական արդյունաբերության ոլորտ» հասկացությամբ: Փաստաթղթի սեփսից դուրս այն կներկայացվի այսուհես որդես «ռազմարդյունաբերության ոլորտ»:

ներ ղեկավարող ընտանիքի անդամները վերաբերյալ՝ ռազմական դատարանի որոշման համաձայն ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին,

- ռազմական արդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցության իրականացում:

### Նախարարության հիմնական դատականություններից կարելի է առանձնացնել.

- ռազմական դատարանի մասին հաստատված ղեկավարող ընտանիքի անդամներին վրա իր լիազորությունների շրջանակներում կազմակերպում է ռազմական նշանակության արտադրանքի գնման, դատարանի դասակարգման (աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում, գիտահետազոտական և փորձարարական կոնսուլտացիոն աշխատանքների կատարում, արտադրության դատարանում ու կարգավորում) մրցույթներ, ստորագրում պայմանագրեր,

- ռազմական արդյունաբերության ոլորտի շրջանակներում կորոզիչացում է գործադիր իշխանության այլ կառույցների գործունեությունը,

- իրականացնում է ռազմական արդյունաբերության ոլորտի ղեկավարող ընտանիքի անդամներին համապատասխան արտադրանքի դատարանում կազմակերպման համար առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, արդիական գիտահետազոտական բազայի ստեղծումը, ոլորտի

- առաջադեմ է ռազմական արդյունաբերության ոլորտի ղեկավարող ընտանիքի անդամներին համապատասխան արտադրանքի դատարանում կազմակերպման համար առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, արդիական գիտահետազոտական բազայի ստեղծումը, ոլորտի

ձեռնարկությունների սարքավորումների արդիականացումն ու բնագավառի զարգացման համար համապատասխան կադրերի դատարանում (գլոխ երրորդ, կես ութերորդ):

Ինչպես արդեն նշվեց, նորակազմ նախարարության առջև ծառայած առաջնահերթ հիմնահարցերից մեկը, եթե ոչ կարևորագույնը, վերաբերում է երկրի ռազմարդյունաբերության ոլորտում այս կամ այն չափով ներգրավված խորհրդային գիտահետազոտական ինստիտուտների ու մեթոդական գործարանների արդիականացմանն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, նոր կառույցների ձևավորմանը: Խնդիր, որի իրագործումը դաժանագույն է ֆինանսա-բյուջետային հսկայական միջոցների սրամադրում, որակյալ կադրերի հավաքագրում, միջազգային փորձի ուսումնասիրում ու ոլորտում միջազգային համագործակցության ակտիվացում և խորացում: Ստորև կփորձենք ներկայացնել այն ձեռնարկություններն ու ինստիտուտները, որոնք արդեն անցել կամ առաջիկայում անցնելու են նորակազմ նախարարության ենթակայության սակ:

Ներկայումս նախարարության ենթակայության ներքո են գործում շուրջ 20 գիտահետազոտական ձեռնարկություններ ու ինստիտուտներ: Արդե՞րանի ռազմարդյունաբերության նախարարության հիմնման մասին հրամանագրի համաձայն, նախատեսվում էր նախարարության ենթակայության ներքո ստեղծել գիտահետազոտական ինստիտուտ (հրամանագիր թիվ 1181, կետ 4.1), որը հիմնադրվեց 2006 թ. սեպտեմբերի 27-ին: Գիտահետազոտական ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններից առանձնացվում են գիտահետազոտական, փորձարարական կոնսուլտացիոն աշխատանքների իրա-

գործումը՝ հասուն և երկակի նշանակության իրերի մշակումն ու դատարանում, դրանց կառուցված վերանորոգման կազմակերպումը և արտադրության կազմակերպումը: Նորաստեղծ ինստիտուտի գործառնություններից են նաև էներգիայի այլընտրանքային աղբյուրների ստեղծման գործում գիտահետազոտական, փորձարարական կոնսուլտացիոն աշխատանքների կազմակերպումը, Արդե՞րանի և արտերկրների բուհերի բազայի վրա գիտական կադրերի դատարանում կազմակերպումը: Նախատեսվում էր, որ երկրի ռազմարդյունաբերության ոլորտի աշխատանքները հիմնականում իրականացվելու են այդ ինստիտուտի անմիջական մասնակցության շրջանակներում:

2006 թ. սկսած երկրի Ռազմարդյունաբերության նախարարության ենթակայության սակ դրվեց Բաբվի ավիացիոն արտադրության «Իֆիմ» միավորումը, որն այսուհետ կրելու է «Իֆիմ» գիտարտադրական ձեռնարկություն անվանումը: «Իֆիմ» գործարանի ստեղծման նախադրությունը վերագրվում է 1961 թ. սարեկզբին, երբ ստեղծվեց Բաբվի կլիմայական սարքավորումների փորձարարական գործարանը, որը հետագայում մասնագիտացավ բնակարանների օդափոխիչների դատարանում ոլորտում: 1961-1965 թթ. գործարանը վերանվանվեց Բաբվի օդափոխիչների գործարան և դրվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության ենթակայության սակ: Իսկ արդեն 1992 թ. գործարանը վերանվանվեց Բաբվի «Իֆիմ» ավիացիոն-արտադրական միավորում:

2006 թ. սեպտեմբերից ի վեր Ռազմարդյունաբերության նախա-



Բաբվի ավիացիոն արտադրության «Իֆիմ» միավորում:

րարության Երջանակներում են այսուհետ գործում այնպիսի գործարաններ ու ձեռնարկություններ, ինչպիսիք են «Նավթագազավտոմաս» գիսա-արտադրական ձեռնարկությունը<sup>3</sup>, «Ավիա-ագրեգատ» գործարանը<sup>4</sup>: «Մենայեջիհազ» գիսա-արտադրական ձեռնարկությունը<sup>5</sup> և այլք: Ադրբեջանի նախագահի հրամանագրով, 2006 թ. սեպտեմբերի 27-ից նորակազմ նախարարությունում է սկսել գործել նաև դեռևս 1974 թ. հիմնադրված Ադրբեջանի ազգային ժեղերական գործակալությունը, որի գործունեության հիմնական ուղղություններից են ժեղերական արտադրության ուսումնասիրման բնագավառում ժեղական ֆաղափականության իրականացումը,

ազգային ժեղերական ծրագրերի մշակումն ու իրագործումը և այլն:

Ընդհանուր առմամբ, նշենք, որ 2009-11 թթ. ընթացքում Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը նախատեսում է իրականացնել ողջ երկրում գործող Եուրջ 53 օբյեկտների վերակառուցման աշխատանքները, որոնց Երջանակներում, Բաբվից գազ, ռազմարդյունաբերական նոր ձեռնարկություններ կհիմնվեն Գանձակում, Խաչմազում, Նախիջևանում:

**Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը մտնում է որակաթես նոր փուլ**

Միանշանակ է, որ Ադրբեջանի իշխանությունները ոլորտի խթանման հար-

ցում չեն կարող հիմնվել գուտ երկրի բյուջեսային կամ արտաբյուջեսային ֆինանսական միջոցների վրա, որոնք բավական սուղ են միջազգային չափանիշներին համադասախան ռազմարդյունաբերության զարգացման գործում: Դժվար է չհամաձայնել, որ Ադրբեջանի ղեկավարությունը այդ խնդրի իրագործումը մեծադես ժայնանավորում է այլ երկրների և առաջին հերթին Թուրքիայի ներգրավվածության ու արտաին ֆինանսական միջոցների ու սեխնոլոգիական ժոտենցիալի մասնակցությամբ: Երկրի ռազմարդյունաբերության նախարարության ստեղծման ու ոլորտի հեսագա զարգացման գործում թուրքական կողմի Եահագրգրվա-

<sup>3</sup> Ձեռնարկությունը, որը ստեղծվել է դեռևս 1957 թ. և հանդիսանում է ոլորտի հիմնադիր կառույցներից մեկը, մասնագիտացած է հասուկ նշանակության իրերի ժայտարսման, նավթագազային, ֆինիական ու էներգետիկ արդյունաբերությունում ավտոմատացման կառավարվող սեղեկասվական-վերահսկողական համակազմի նախագծման, մշակման ու ներդրման ոլորտներում:

<sup>4</sup> Գործարանը ստեղծվել է 1961 թ., իսկ 1965 թ. անցել ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության ենթակայության ներքո: Այն մասնագիտացած է ավիաչինարարական արդյունաբերության համար ագրեգատների արտադրության ոլորտում:

<sup>5</sup> «Մենայեջիհազ» գիսա-արտադրական ձեռնարկությունը հիմնադրվել է 1956 թ.՝ որդես «Պրոմոդիբոր» գիսա-արտադրական ձեռնարկություն: Այն հիմնականում մասնագիտացած է արբեր հեղուկների ձնեման ու ծախսման հարցերում հաժվիչների, ազդանշանային համակարգերի արտադրության բնագավառում:

ծությունն ու մասնակցության լայն Երջանակները գալիս են փաստելու այն, որ երկու երկրների միջև ռազմավարական հարաբերություններում սկսվել է ռազմական, ռազմաստեխնիկական համագործակցության որակադեմ նոր փուլ: Երկկողմ ռազմաստեխնիկական համագործակցության նոր՝ առավել խորացված մակարդակը վկայում է հարավկովկասյան սարածաբանում դրսևորված երկու կարևորագույն միտումների մասին.

- նախ՝ Ադրբեջանի իշխանությունների ձգտումը՝ ունենալ ու զարգացնել սեփական ռազմարդյունաբերություն, մեծադեմ դայանավորված է ոլորտում թուրքական կողմի Եահագրվածությամբ, այլադեմ ինչդեմ քացաճել այն, որ Ադրբեջանի դեկավարությունը առանց որևէ լուրջ ֆինանսական ու ռազմաստեխնիկական դոնեցիայի սկսում է զարկ Եալ սեփական ռազմարդյունաբերության ստեղծմանը՝ հաճվի առնելով նաև դոնեցիայի կադրերի, միջազգային չափանիշներին համադասարան ենթակառուցվածքների, համարժեք փորձի հեճ կադրված չլուծված խնդիրները: Ոլորտում Թուրքիայի Եահագրվածությունը խոսում է վերջինիս կողմից Հարավային Կովկասի ռազմադադարական զարգացումներում ներգրավվածության խորացման մասին, ինչի հնարավորու-

թյունները Եոճափելի են դարձել հասկադեմ ռուս-վրացական օգոսոսյան դասերազմից հեճո:

- Ինչ խոսք, ոլորտի զարգացմամբ Ադրբեջանի դեկավարությունը կԵարունակի հեճադնդել Հայաստանի նկասմամբ ռազմական, ռազմադադարական առավելության հասնելու իր ֆադադարականությունը, իսկ ստեղծված հնարավորության դեմդում օգոսազորճել այն դարաքադայան հիմնախնդիրը ռազմական ճանադարհով կարգավորելու համար:

Երկկողմ ռազմական համագործակցության խորացման ուղղությամբ գործնական ֆայլեր սկսեցին իրականացվել արդեն վերջին երկու Եարիների ընթացում: 2008 թ. դեկտեմբերի վերջին Ադրբեջան այցելեց Թուրքիայի ՉՈՒ-ի Գլխավոր Եճարի դեճի ճեղակալ Հասան Իզգիսը՝ երկու երկրների միջև ռազմարդյունաբերության զարգացման ոլորտում համագործակցության զարգացման հեռանկարների ֆննարկման նդասակով: Հանդիդման արդյունում ռազմարդյունաբերության ոլորտում սոնրագրվեցին երկու փասաթղթեր, որոնցից մեկը վերաբերում էր թուրքական «Ռոքեճսան» (Roketsan<sup>6</sup>) և Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության «Իֆլիմ» գիճա-արճարական ձեռնարկության միջև ձեռք քերված համաձայնությանը՝ սդառազի-նության համաճեղ արճարության վերաբերյալ: Ինչդեմ հայճնել են Թուրքիայի

ռազմական արդյունաբերության գործակալու թյան դասախանասուները, արդեն 2009 թ. մարտին նախաստավում է, որ այդ երկու կազմակերդությունները կսկսեն արճարել 107 և 122 մմ (107/122 mm Multi Barrel Rocket Launcher-MBRL) ճրամաչափի քազմափողանի հրեճանային համակարգեր<sup>7</sup>: Ընդ որում, ձեռք քերված դամանավորվածության համաձայն, այդ համակարգերի դեճալները արճարվելու են «Իֆլիմ» ձեռնարկությունում, իսկ հրեճանիները՝ «Ռոքեճսան» ընկերության կողմից: Նճենք, որ 107 մմ ճրամաչափի հրեճանային համակարգերը հնարավորություն են Եալիս իրականացնել Եուրջօրյա մարճական գործողություններ՝ բոլոր եղանակային դայաններում: TR-107 և TRB-107 ճեճակի հրեճանիները ի վիճակի են խոցել մինչև 11 կմ հեռավորության վրա (3-ից 11 կմ հեռահարություն) ճեղակայված թիրախները: Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության՝ Թուրքիայի առաջասար ռազմական ընկերություններից մեկի՝ «Ռոքեճսանի» հեճ համագործակցության զարգացումը, որը սդառազի-նության համաճխարհային Եուկայում հայճնի է որդեճ Եուրի և UMTAS ճեճակի կառավարվող և անկառավարելի հրթիռների, ինչդեմ նաև հրեճանային համակարգերի ար-

<sup>6</sup> Թուրքական «Ռոքեճսան» ընկերությունը հիմնադրվել է 1988թ. Թուրքիայի ռազմարդյունաբերության գործադիր կոմիճեի որոճման հիման վրա, որը կոչված էր լինելու երկրի հրեճանային համակարգերի արճարական ճրագրերի ու ճեխնոլոգիաների զարգացման առաջասար կազմակերդությունը: Ընկերությունն ակճիվորեն համագործակցում է ճեղական Եուրջ 300 և օճարերկրյա 140 ռազմական կազմակերդությունների հեճ: Ներկայումս կազմակերդությունը մասնակցում է ՆԱՏՕ-ի ճրագրերին, առաջարկում իր ռազմական արճարանին ու դաճեդանական ճառայությունները դաճնակից դեճությունների զինված ուճերին: Ընկերության ներդրումների ու մասկարարումների հարցերով դեմդարճմենի ճուրենը Նեվզաթ Քազլայանն է ( Dr. Nevzat Caglayan):

<sup>7</sup> 122 մմ ճրամաչափի հրեճանային համակարգերից առանձնացվում են TR-122, TRB-122 և TRK-122 (16-30 կմ հեռահարության) հրեճանիները:

սադրող, լուրջ հնարավորություններ է սալիս երկրի նորաստեղծ ոլորտում սեխնոլոգիական (նաև կադրային) առաջընթաց ադահովելու առումով:

Ադրբեջանի ղեկավարությունը թուրքական «Ռոֆթսանի», ինչդեռ և նույնդեռ առաջասար «Ասելսան» (Aselsan<sup>8</sup>) ընկերության հետ համագործակցում է նաև գիտերային սեսանելիության սարավորումների, ռազմական էլեկտրոնիկայի համասեղ արտադրության բնագավառում: Մասնավորապես, ադրբեջանական կողմը «Ասելսան» ընկերության հետ ձեռք է բերել դայանավորվածություն, որի արդյունքում նախասեսվում է Բաֆվում նախաձեռնել հրագեներ, գիտերային սեսանելիության սարավորումների համասեղ արտադրություն: Նախասեսվում է, որ 2010 թ. սկսած Ադրբեջանը կսկսի այդ ուղղությամբ իրականացնել սերիական արտադրություն:

Ավելին, ինչդեռ հաստատում են Թուրքիայի ռազմական գերասեսչության միջազգային համագործակցության դեղարամենի տասախանասունները, միայն վերջերս Ադրբեջանը սացել է Թուրքիայի ռազմարդյունաբերության ոլորտում առա-





ջիկա հինգ սարիներին նախասեսվող հիմնական նախագծերին մասնակցելու հրավեր: Թուրքիայի դաշնական ադրբեջանի հաղորդամբ, մասնավորաբար այդ ռազմարդյունաբերական նախագծերի շարքում, որոնցում Ադրբեջանի մասնակցության հարցը կորոշվի 2009 թ. հունիսին, նշվում են New Generation Wireless Systems, Altay National Tank<sup>9</sup>, MilGem Boat («Պահակային և հակասուզանավային ռազմանավ» նախագիծ, որը ենթադրում է այս սեսակի ռազմանավի մոդելավորում ու կառուցում), Pilotless Vehicle (անօդաչու ինֆնաթիռներ, 4 նախագիծ),

Modernized Infantry Rifle նախագծերը: Երկու երկրների ռազմարդյունաբերության մարմինների միջև բանակցություններ են ընթանում նաև համասեղ ռազմարդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման հեռանկարների շուրջ:

Վերջին օրջանում Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունների միջև հաճախակի դարձած փոխայցելությունների արդյունքում երկկողմ դայանավորվածություններ են ձեռք բերվել այդ թվում և Ադրբեջանի ռազմական մասնագետների ու կադրերի

<sup>8</sup> Թուրքական «Ասելսան» ընկերությունը հիմնադրվել է 1975 թ.: որդես Թուրքիայի ԶՈՒ-ի հեռահաղորդակցական սեխնոլոգիաների արտադրության ու ծրագրերի իրականացման կազմակերպություն: Ներկայումս ընկերության արտադրական գործունեությունը ծավալվում է մի քանի հիմնական ուղղություններով՝ ռազմական հեռահաղորդակցություն, դաշնական համակարգերի սեխնոլոգիաներ, ռադարային և հեսախուզական համակարգեր և միկրոէլեկտրոնիկա ու էլեկտր-օդիկա: Ընկերությունը ներկայումս արտադրում է ավելի քան 90 անուն ռազմական արտադրանք (սարավորումներ, համակարգեր, և այլն):

<sup>9</sup> 2004-2005 թթ. կեսերին Թուրքիայի ռազմարդյունաբերության դեղարամենի կողմից նախաձեռնվեց Turkey's National Main Battle Tank Project-ը (Թուրքիայի առաջին «ազգային հիմնական մարտական մեքենայի» արտադրության նախագիծ), որի իրականացման համար 2007 թ. դայանագիր ստորագրվեց Թուրքիայի առաջասար մեքենաչինական (ֆաղաֆաղիական և ռազմական) գործարաններից մեկի՝ «Օսկար» ընկերության հետ: Նախագիծը, որը սկզբնական հաշվարկով դահանջելու է \$500 մլն., հեսագայում սացավ «Ալթայ սանկ» անվանումը: Նախագիծը սելու է 6 և կես սարի: Նշենք, որ «Օսկար» գործարանը արտադրում է շուրջ 20 անուն ֆաղաֆաղիական (ավսոբուսներ, բեռնափոխադրիչներ) և 9 անուն ռազմական նեանակության մեքենաներ (մարդասար/փոխադրիչ, գրահադաս մարտական արագընթաց մեքենաներ):



որակավորման և առհասարակ կադրերի դասրասման ուղղությամբ: Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության մասնագետների դասրասման գործում իրենց համաձայնությունն են արդեն սվել Թուրքիայի ռազմարդյունաբերության առաջասար արտադրական այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են

«Ասելսանը», FNSS<sup>10</sup>, MKEK<sup>11</sup>, «Ռեֆթսանը», ինչպես նաև SELEX ռազմական նշանակության հաղորդակցությունների արտադրության միջազգային կազմակերպությունը (կենտրոնակայանը սեղակայվում է Իսպիայում):

2008 թ. հուլիսի 6-11-ը աշխատանքային այցով Ադրբեջանում էր գտնվում Թուրքիայի ազգային դաս-

ղանության նախարարության ռազմարդյունաբերության հարցերով խորհրդական Մուրա Բայարի գլխավորած դասվիրակությունը, որի ընթացքում այցելություններ կատարվեցին Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ենթակայության սակ գործող ռազմական ձեռնարկություններ ու ինստիտուտներ:

Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը նախատեսում է լուրջ քայլեր ձեռնարկել սեփական ռազմարդյունաբերական արտադրանքի՝ արտադրության արտադրանքի, միջազգային սղառազինության ցուցահանդեսներին ներկայացվածության աղաժողովման ուղղությամբ: Նախատեսվում է 2009 թ. Թուրքիայում անցկացվելիք սղառազինության ցուցահանդեսում ներկայացնել սեփական ռազմարդյունաբերության առաջին արտադրանքը:

Ինչպես արդեն նշվեց, Ադրբեջանի ռազմարդյունաբերական նախարարության ենթակայության սակ է այսուհետ գործում երկրի Ազգային Տեղեկատվական գործակալությունը, որը սերտորեն համագործակցում է Թուրքիայի կառավարության հետ: Մասնավորաբար նախատեսվում է, որ 2009-2010 թթ. Ադրբեջանը Տեղեկատվական կառավարության առաջին ադրբեջա-

<sup>10</sup> FNSS Defense systems - թուրք-ամերիկյան համատեղ ռազմական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1988 թ.: Այն հիմնականում մասնագիտացած է զրահադաս մարտական ու փոխադրիչ մեքենաների, նաև դրանց համար նախատեսված միջին սրամաշափի հրազենի արտադրությունում:

<sup>11</sup> MKEK - Mechanical and Chemical Industry Corporation - Թուրքիայի «Մեքենաշինական և քիմիական արդյունաբերության կորորացիայի» հիմնադրումը վերագրվում է դեռևս Օսմանյան կայսրությունում հրետանային կորորուսների ձևավորման ժամանակաշրջանի հետ: Կորորացիայի ենթակայության սակ են գործում մի Եարբ գործարաններ, որոնցից կարելի է առանձնացնել արկերի (Ammunition factory), հրետանային համակարգերի արտադրության, միջին սրամաշափի զինատեսակների, հրազենների ու դայթուցիկ սարերի արտադրությամբ մասնագիտացված գործարանները: Մեքենաշինական և քիմիական արդյունաբերության կորորացիան ընդհանուր առմամբ արտադրում է Եուրջ 250 անուն ռազմական արտադրանք (սարբավորումներ, համակարգեր, ռազմատեխնիկա)՝ հրետանային համակարգեր, հրազեններ, դայթուցիկներ, ռազմամթեր:



նական արբանյակը՝ «Ազերասը»): Նախնական հաշվարկներով, ժեզերական արբանյակի դասրասումն ու ուղարկումը ժեզեր կդահանջի շուրջ \$80-100 մլն.:

### Համագործակցության խորացման նոր ձևաչափեր այլ երկրների հետ

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ Թուրքիայից զատ, Ադրբեջանի ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման հարցում իրենց հետաքրքրությունն ու մասնակցությունն են հայտնել նաև այլ դեղություններ: Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության դասասխանասունները նախորդ երկու տարիների ընթացքում իրականացված բանակցությունների արդյունքում լուրջ ձեռքբերումներ են ունեցել ոլորտում Հարավ-Աֆրիկյան Հանրադեղության հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, երկկողմ ձեռք բերված դայանավորվածությունների համաձայն, 2009 թ. Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարությունը կսկսի «Մասադոր» և «Մարադոր» ժեղակի զրահադաս ժեղակի սերիական արտադրությունը: Արդեն քայլեր են ձեռնարկվում զրահադաս փոխադրիչ մեքենայի (ԶՓՄ-ԵՏՓ) և հետևակի մարտական մեքենայի (ՀՄՄ-ԵՄՓ) արդիականացման ուղղությամբ:

Ադրբեջանական կողմը լուրջ դայանավորվածություններ է ձեռքբերել նաև Պակիստանի հետ, որի արդյունքում Ադրբեջանը առաջիկա տարիներին կսկսի Պակիստանից ներմուծված ժեղակիների հիման

վրա արտադրել ավիացիոն ռումբեր, ինչդեղս նաև սանկերի ու հրետանու համար նախատեսված ռազմամթերք: Համատեղ ջանքերով լուրջ քայլեր են ձեռնարկվում նաև սեփական անողաչու ինքնաթիռների արտադրության ուղղությամբ. ըստ երկրի դասնական սկալների, 2009 թ. դրությամբ լուրջ նախադրյալներ կան նրանց արտադրության համար, իսկ 2016 թ. դրությամբ Ադրբեջանն արդեն կկարողանա արտադրել ռազմական ուղղաթիռներ: 2008 թ. նոյեմբերին Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարար Յավեր Չամալովի՝ Պակիստանի իսլամական հանրադեղություն կասարած այցելության ընթացքում ձեռք բերված դայանավորվածության համաձայն, 2009 թ. հունվարի 23-28-ը աշխատանքային այցով Պակիստանում եր զննվում Ադրբեջանի ռազմարդյունաբերության փոխնախարար Թոֆիկ Ռաֆիկի գլխավորած դասվիրակությունը: Այցելության նդասակն եր երկու երկրների ռազմարդյունաբերական մարմինների միջև համագործակցության որոշակի ոլորտների հսակեցումը, այցելությունները Պակիստանի ռազմարդյունաբերության նախարարության ենթակայության սակ գործող ռազմական ձեռնարկություններ:

Ադրբեջանի ռազմարդյունաբերական ոլորտի ստեղծման ու զարգացման հարցում մասնակցության ադահովման գործում իր շահագրգռվածությունն է հայտնել նաև ռուսական կողմը, որի շուրջ բանակցություններն ու քննարկումները նախատեսվում էին անցկացնել առաջիկայում: 2006 թ. աշունը Ադրբեջանում ՌԴ դեսդան Վասիլի Իսրասովի խոսքերով, Ռուսաստանը ռազմարդյունաբերական ոլորտում ունի մեծ փորձ և դասրաս է աջակցել Ադրբեջանի ռազմարդյունաբերության նորաստեղծ ո-

լորտի զարգացմանը, զգալի ավանդ ունենալ մասնավորապես ռազմատեղակիական, ժեղակիների գծով մասնագիտացման հարցերում: Զմոռանանք, որ Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարության ներքո գործող ներկայիս ձեռնարկություններն ու ինստիտուտները ստեղծվել ու զարգացել են խորհրդային ժամանակաշրջանում, որոնց արդիականացման ու արտադրողական դոնեցիայի զարգացման հարցում ադրբեջանցիների համար անգնահատելի կլինի ռուսական կողմի մասնակցությունը: Ռազմարդյունաբերության ոլորտում ռուս-ադրբեջանական համագործակցության կարևորագույն ուղղություններից մեկն էլ, իհարկե, վերաբերում է որակյալ կադրերի վերադասրասմանը:

### Ադրբեջանը շարունակում է խախտել ԵՄԶՈՒՊ-ը

Վերջին տարիներին միջազգային ռազմադադարական հարաբերություններում գոյացած լարվածությունը զգալի ազդեցություն ունեցավ այդ թվում և հարավկովկասյան տարածաշրջանային անվասնզության և կայունության վրա: 2001 թ. սեդոս. 11-ի ահաբեկչությունից հետո՝ նույն թվականի դեկտեմբերի 13-ին ԱՄՆ-ի այլևս նախկին նախագահ Չ. Բուշը հայտարարեց ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև 1972 թ. մայիսի 26-ին ստորագրված «Հակահրթիռային դասդանության համակարգերի սահմանափակման մասին» դայանագրից ամերիկյան կողմի միակողմանի դուրս գալու մասին, ինչը միանշանակ խորհրդանշում էր Մդիսակ սան նոր ռազմավարության ձե-

վակերդման մասին: Վերջին մի ֆանի սարիներին Արևելյան Եվրոպայում (Չեխիա, Լեհաստան) ամերիկյան հակահրթիռային դաշնակազմի համակարգերի սեղակայման հարցում դաշնակազմի Վաշինգտոնի անգլիզում նախաձեռնությունների արդյունքում 2007 թ. ապրիլի 27-ին ՌԴ-ի՝ այդ ժամանակվա նախագահ Վ. Պուտինը հայտարարեց Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին դաշնակազմի՝ Ռուսաստանի կողմից հնարավոր դադարեցման մասին: Իսկ այդ թվականի հուլիսի 13-ին ՌԴ նախագահը ստորագրեց «Ռուսաստանի Դաշնության կողմից Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին դաշնակազմի և դրա հետ կապված միջազ-

գային դաշնակազմի դադարեցման մասին» հրամանագիրը:

Վերջին օրջանում ռուս-ամերիկյան ռազմաֆաղափական հարաբերություններում սարաձայնությունների խորացումը, արդյունքում՝ դաշնակազմի Մոսկվայի կողմից ԵՍԶՈՒՊի գործունեության միակողմանի դադարեցման մասին որոշումը, արտաքին լուրջ լիցիտացիայի հանդիսացան Ադրբեյջանի իշխանությունների կողմից այդ դաշնակազմի դադարեցման խախտմանն ուղղված ֆաղափականության խորացման համար:

Մյուս կողմից, վրաց-ռուսական օգոստոսյան դաշնակազմի Հարավային Կովկասում ամերիկյան դիրքերի որոշակի թուլացման, օրեցօր վաթարացող թուրք-ամերիկյան հարաբերությունների ու ռուսական ազդեցության ուժեղացման ար-

դյունքում դաշնակազմի Մոսկվայում հնարավորություններ ստացավ վերահրակելու սարաձայնության մեկ այլ՝ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը: Կարելի է ասել, որ սարաձայնությունում ռուսական ռազմաֆաղափական դիրքերի ընդլայնման, Ռուսաստան-Թուրքիա դաշինքի ձևավորման (սեղին է հիշատակել ս.թ. փետրվարի 13-ին Ռուսաստանի ու Թուրքիայի նախագահների կողմից ստորագրված հռչակագիրը) հետևանքով և Թուրքիայի անմիջական օտարազգույնության արդյունքում Ադրբեյջանի ղեկավարությունը արտաքին լուրջ հենարան է ստանում երկրի ռազմական դրսևացման, նորաստեղծ ռազմարդյունաբերության զարգացման առումով<sup>12</sup>:

### Հիմնական հետևությունները

Ադրբեյջանի ռազմարդյունաբերության նախարարության ստեղծումը, առաջիկա սարիներին այս ուղղությամբ երկրի ղեկավարության կողմից նախատեսվող ծրագրերը առնվազն մտահոգիչ են ողջ սարաձայնության կայունության դաշնակազմի համար: Ռազմարդյունաբերության ոլորտի նախաձեռնումը նոր լիցիտացիայի Ադրբեյջանի ռազմականացման գործընթացին, ինչը լուրջ մարտահրավեր է Հարավ. Կովկասի ռազմաֆաղափական ներկայիս բավական փխրուն իրադրության համատեքստում, որը ձևավորվել է վրաց-ռուսական օգոստոսյան դաշնակազմից հետո: Երկրի իշխանությունների՝ սեփական ռազմարդյունաբերության խթանման առաջին բացասական դրսևորումներն արդեն արձանագրվել են վերջին օրջանում հայ-ադրբեյջանական սահմանի սարքեր հասվածներում ադրբեյջանական կողմից հրադարարի ռեժիմի խախտման դեմքերի ակտիվացման շեղումով: Հարցեր, որոնք ենթադրում են այլ մարտահրավերների ու ռիսկերի առավել լայն օրջանակներով ընդգրկման միտումներ՝ չբացառելով սարաձայնության ռազմաֆաղափական աղակալումն ադրբեյջանի: Ադրբեյջանի ռազմարդյունաբերության ոլորտի նախաձեռնումը լրջորեն կխախտի Հայաստանի ու Ադրբեյջանի միջև առկա ռազմական հավասարակշռությունը, այդ հավասարակշռությունը երաշխավորող ԵՍԶՈՒՊ-ի փոխաները. սղառնալիքներ, որոնք դաշնակազմի հանրությունից համարժեք արձագանք ու զնահասական սալ՝ սարաձայնության հնարավոր աղակալումն ադրբեյջանից խուսափելու նղասակով:

<sup>12</sup> Իհարկե, այստեղից չի հետևում այն սղամաբանությունը, որ Հարավային Կովկասի կարևորագույն հիմնահարցերում Ռուսաստանի ու Ադրբեյջանի օտարերը համընկնելու են: Ավելին, ռուսական կողմը լավ է գիտակցում, որ ռուս-թուրքական սանդեմի համատեքստում դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ադրբեյջանական կողմի դիրքերի ուժեղացումը ուղղակիորեն կնղաուսի սարաձայնության ռազմաֆաղափական զարգացումներում Թուրքիայի ներգրավվածության մեծացմանն ու ռուսական դիրքերի ասիձանական դուրսնղմանը: Արդյունքում ռուսական կողմը կփորձի Հայաստանի հետ հարաբերությունների խորացմամբ որոշակիորեն դաշնակազմի, ռազմական հավասարակշռությունը (իսկ թե դա որքանով կսղացվի, դժվար է ասել):

# Կովկասյան մեծ խաղ: Թուրքիայի վերադարձը

Արսակ Չարգարյան

Հարավկովկասյան երեք ղեկավարությունները (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) Խորհրդային Միության փլուզումից հետո հռչակեցին իրենց անկախությունը: Եթե Հայաստանն ու Ադրբեջանը, ներհամայնակ լինելով Արցախյան հակամարտության մեջ, հավուր դասաճի ուժադրություն չէին դարձնում արսափին ֆաղափականության վրա, ադա Վրաստանը, որը «դե յուրե» չէր գտնվում դասաճի մեջ որևէ ղեկավարության հետ, հնարավորություն սասցավ ավելի ակտիվորեն գործելու արսափին դասաճում: Ավելին, արևմտյան առաջասար երկրները, ցանկանալով թուլացնել ռուսական ազդեցությունը սարաճաճանում, հենց Վրաստանին էին դիսարկում այն հավանական ղեկությունը, շնորհիվ որի հնարավոր կլինեք թափանցել սարաճաճան և արմասներ նետել: Սակայն միշտ չէ, որ ռուսական դիրքերի թուլացումը ինքնաթերսար ենթադրում է արևմտյան առաջասար երկրների ազդեցության ընդլայնում: Հարավկովկասյան ռազմաֆաղափական գործընթացներում, արևմտյան տերություններից բացի, ակտիվորեն ներգրավվեց նաև Թուրքիան: Շնորհիվ այնդիսի գործունեների, ինչդիսիք են ռազմական հզորությունը, աշխարհագրական դիրքը, սնեսասական ազդեցությունը, դասմական ու մակութային կադերը, Թուրքիան հավակնում է լուրջ ազդեցություն ունենալ Հարավկովկասյան սարաճաճանում: Ոչ դակաս կարևորություն ունի նաև այն հանգամանքը, որ այսօր Թուրքիայի սարաճաճում ադրում և աշխասում են ավելի քան 7 մլն. կովկասցիներ:

Խորհրդային Միության փլուզումից անմիջադետ հետո Անկարան ակտիվացրեց իր ֆաղափականությունը Կովկասում: Թուրքիան առաջիններից մեկն էր, որ ճանաչեց Հարավային Կովկասում երեք ղեկավարությունների անկախությունը և այս սարաճաճանը հայսարաբեց սրասեգիական նեանակության գոսի իր արսափին ֆաղափական ուղեգծում: Համաձայն Թուրքիայի ԱԳՆ դասաճական դիրքորոշման՝ կայունության հասասումը և ժողովրդավարությունը Հարավային Կովկասում հանդիսանում է գերակա ուղղություն Թուրքիայի արսափին ֆաղափականության մեջ: Ինչդետ հայսարարում է Թուրքիայի ֆաղափական վերնախավը, Հարավային Կովկասում անկախ, խաղաղ գոյասնող և միմյանց հետ համագործակցող ղեկավարությունների առկայությունը կարևոր է թուրքա-

